ԾԻԼՆ
ԱՒԱՐԱՅՐԻ

Ա. ՏԱՐԻ 1866 ԹԻՒ ԺԱ.
ՆՈՅԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ՆԵՐՍԷՍ Ե.Ի ՄԱՀԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԱՏԹԷՈՍ Ա.ՆՈՅՆ ՄԱՀԸ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
1857 — 1866

(Շարունակութիւն. Տես Թիւ Ը. երես 438)։

Միւս օրն առաւոտանց վերը կացայ և ժամը ութնէն կաթողիկոսի մօտ գնացի այն յուսով, որ առանձին կը գտնեմ և նոյն առարկայի մասին հանդարտութեամբ խօսելով մի բան կը հասկացնեմ իրան և մի խօսք կառնեմ բերնէն։ Այս առարկային լաւ խելամուտ եղել էի, վասն զի առաջի գիշերը երբ առանձին մնացի երկու երեք անգամ թէ Այվազովսկու ուղղուած գրուածքը (1) թէ ինձ գրուած նամակը մեծ ուշադ-

(1) Այդ գրուածն արդէն հրատարակած ունինք մեր Հանդիսի Բ. Թուին մէջ 102 երեսումը։

բութեամբ կարդացել էի և բանի էութիւնը յառաջուցմէ լաւ էի ըմբռնել. բայց ոչ մի կերպով այդ թղթերը չէի կարող յայտնել կաթողիկոսին. վասն զի վստահութիւն չունէի նրա վրայ և վախենում էի, որ ինձ կը մատնէ կամ բարեկամ կամ չարակամ մարդկանց, որոց համարումն իմ մասին պէտք էի որ ստանամ և այդ բանը թագուն չպահէին իմ ծառայութեան նշանակութեան դէմ էր. վասն զի այդ թղթերի հեղինակը պիտի չյայտնուէր, այլ որու որ գրուած է նրա թեթեւամտութիւնը և դաղտնապահ չլինելը բոլոր թիֆլիզ պիտի իմանար, նրա համար ես էլ բռնեցի այդ թղթերը մի պարկի ատտարը քանդեցի և նրա մէջ դնելով կարեցի, այնպէս որ մի փոքր ժամանակէ յետոյ ես էլ մոռացայ թէ ո՞ւր եմ պահել ու կարծեցի որ կորուսել եմ, մինչեւ որ յետոյ տարիներ անց կացան և մի օր դիպուածով պահած տեղէս գտայ դրանք։ Կաթողիկոսի սենեկէն ներս որ մտայ, տեսայ բաղմութիւն մարդկանց, ինքն դիւանի վրայ ծալապատիկ նստած էր, գլուխը մի ահագին ֆէս կարճ փիւսկիւլով, ծիրանեգոյն մի էնդարի կարճ, որու դրօշները հաղիւ էին ծածկումծնկները, մի թխագոյն գօտի, կարելի է հինգ անգամ պատատած մէջքի վերէն ու վարէն, կարճ դուլպէքն ոտքերին առանց ոտքի ամանի սրունքները կերեւային, խոնջանները (ուչքուր) կախ ընկած, մի կարմիր երես մուշտակ ուսերին վրայ թողած, այս կերպարանքով մարդիկ էր ընդունել և նրանց իր մօտն էր նստացուցել ու հետները խօսք անում։ Այդ մարդիկն էին, Կարինեանց Յակոբ վարժապետը, Արարատեանց Առաքել վարժապետը, Մատինեանց Տ. Ստեփանը, Տ. Սահակ Սահարունին և այլ մի քանի անձինք։ Սրանք Ջալալեանցի ուսումնական խորհրդականներն էին, ինքը Ջալալեանցն առաւոտանց վաղ թահիրեանցի և Մատինեանցի հետ իր այցելութիւնը կատարել էր և սրանց էլ իբրեւ ուսումնական և ուսուցիչք Ներսիսեան ուսումարանի՝ ներկայացուցել է Կաթողիկոսին։ Ներս մտայ թէ չէ— իշտէ՛ մեր Իշմիրցին, կը ճանչնա՞ք, ասաց Նրանց Կաթողիկոսը ինձ համար։ Պ. Կարինեանցը կը ճանաչէր ինձ—հրամել էք, վեհափառ Տէր, ասաց և ձեռը մեզ տուաւ ու խօսեց նոյնպէս Տ. Մատինեանցն. բայց իմ երեսը ճնկռատած լինելով ինձմէ բան չհասկացան դրանք, մի փոքր կանգնեցայ մտիկ անելու

բոլորովին անղգայ էր իմ նկատողութեան. ինչ և իցէ լուռ կեցանք ու դնացինք մենք էլ մի կողմ նստանք նոյն սենեկումը. մի փոքր յետոյ մի ուրիշ անձ եկաւ, սա էր Պ. Ղայթմազեանցը, ձեռին մի Մասեայ Աղաւնի բռնած, իսկոյն առաջուայ այցելուքը ոտքի վրայ կանգնեցան, Պ. Կարինեանցը դրա համար ասաց թէ Ներսիսեան ուսումնարանի տեսուչն է, և հայկական լեզուի չէնզոր (այսինքն գրաքննիչ տէրութեան), Պ. Ղայթմազեանց Մատթէոսի ձեռը համբուրեց թէ չէ՝ նա, նրա ձեռնէն բռնեց երեսին պաչ արաւ առանց տեղէն շարժելու—ես քեզի նման մի աղբար ունիմ, գլխիկոր անոր կը նմանիս կոր, անոր աչքերն ունիս-ասաց։ Մատթէոսի քոյր ունենալը գիտէինք, բայց եղբայր ունենալը ոչ։ Այս Պ. Ղայթմազեանցն յիրաւի դէմքով կը նմանէր մի փոքր Մատթէոսի քրոջը, բայց ինչ հարկաւոր էր այն ժամուն այդ բանը միտք բերել ու յիշել, ամենքը ծիծաղեցան, ես կատղում էի, բայց խաղութիւնն իր լրման հասցունելու համար Մատթէոսը Պ. Ղայթմազեանցի ձեռնէն բռնեց—եկուր ղուգիս, զուակս—, ասաց, իբրեւ թէ տաս տարի լինէր նրան ճանաչելը, ու առաւ իր պառկած խուցը տարաւ և կողէնքի մօտ նստեցուց նրան բոլոր այցելուաց և մեր դիմացը, և իբրեւ թէ մի թագուն բան ունի ասելու սկսաւ խօսիլ իր Պօլսեցի լեզուով, որ մէկ խիստ ապահով եմ, որ ոչինչ չհասկացաւ Պ. Ղայթմազեանցը։ Մատթէոսի ասածն է լինում նրան իր Անգլիացւոց դեսպան Բանինկի հետ կռուելը, Բէշիտ փաշային դէմ գնելը, Բրօթէսդանտների յուղման ժամանակ։ Տէրութեան մարդ որ կար իր մօտ, Մատթէոսն իր առաջին պատմելիքն այս դէպքն էր, բոլոր Ռուսաստան մարդ չմնաց որ այդ պատմութիւնը չիմանայ, ոչ թէ միանգամ, այլ կարելի է ասել տասն անգամ։ Կէս ժամուց յետոյ խցէն դուրս եկան ինչպէս որ մնան։ Պ. Ղայթմազեանցն վերհափառին ասաց թէ Մասեայ Աղաւնուոյն մէջ խորեն վարդապետի մի ոտանաւոր քերթուածը կայ Կաթողիկոսի վրայ, որու ձեռին իշխանութեան դաւազան է տալի իբրեւ դատաւոր արդարութեան և թագաւորի հետ դահակից է անում և այլ սրանց նման ծուռի բրուտի բաներ, տէրութեան օրէնքի դէմ լինելով, ասում էր նա չէ կարելի թողնել այդ գրուածքին Ռուսիայում տարած-

ուիլ։ Ոչինչ բան էր այդ, Պ. Ղայթմազեանցն առիթն էր արել այդ բանը կաթողիկոսին մօտենալու համար։

Այսպէս այն օրն այցելուք գալիս էին և Մատթէոսն ընդունում էր նրանց այն վիճակումն ինչպէս որ նկարագրեցինք մի փոքր յառաջ։ Այս այցելուների մեծ մասը Ջալալեաններ էին, որոնց մէջ նշանակելի էր Դաւիթ Սուրէնեանն որուն Մատթէոսն սառն ընդունելութիւն էր արել, որու համար զայրանալով և նա բարձրաձայն գանգատնում էր Սարգիս եպիսկոպոսին իբրեւ թէ Մատթէոսը թուրքի մարդ է, կոպիտ է Օրթագիւղէն ուրիշ տեղ չէ տեսած և այլ որանց նման խօսքեր։ Սարգիս Ջալալն սիրտ ունեցաւ գալ կաթողիկոսի մօտ և Սուրէնեանի համար բարեխօս լինել, համոզելով նրան թէ նա Ռուսաց տէրութեան առջեւ մեծ նշանակութիւն ունեցող մարդ է, ճարտարախօս է, լեզուաբան է, այս է, այն է, ասելով, որ ուրիշ բան չէր բայց միայն մի լեզուարձակ, յանդուգն շողոքորթ, ամեն տեսակ բանսարկութեանց մէջ մըտած ու ելած մարդ, Հայոց մէջ առաջինը բանբերութեան ու բանտարութեան արհեստին մէջ (այսինքն խապարպզանութեան) կուղէնշթէյնի առանձին խորհրդականը, Սարգիս եպիսկոպոսին աջ ձեռը տէրութեան առջեւ ճերմակ երես երեւալու համար, Թահիրեանց և Նրանցպիսեաց ուսուցիչը աղդամատնութեան մէջ և ուրիշ պաշտօն չունեցող, բայց միայն չենք իմանում ինչ անունով ռոճիկ ստացող Ռուսաց կառավարութենէն, այս մարդուն Ջալալն ներկայացուց Կաթողիկոսին և խնդրեց նրամէն որ քաղցր աչքով նայի նրա վրայ, վասն զի ասում էր Ցերութենական մարդ է։ Այդ մարդուն Մատթէոսի մօտենալու պատճառն ուրիշ բան չէր, բայց միայն նրան համոզել Էկզարխին այցելութիւն անելու, նոյնպէս և Աբել Գուրգէնբէգեանցն որ նոյն օրը ճաշէն յետոյ, երբ ամեն մարդ իր ճաշն անցչ արած քնելով էր անցկացնում ժամանակն, նա եկել էր կաթողիկոսի մօտ և առանձին սենեկումն նստած հա խօսում էր հա խօսում, և խեղճ Մատթէոսը գլուխն սրում էր հէնց օրում, վասն զի ոչինչ չէր հասկանում նրա խօսքերէն. վասն զի Աբել Գուրգէնբէգեանցն դրաւոր հայերէն չէր իմանում, խօսածն էր վրացերէն լեզուի գռեհիկ թարգմանութիւնը բոլորովին անսովոր Մատթէոսի

համար, յայտնի բան էր, որ ոչինչ և ոչինչ խօսք չէր հասկանում, բայց չենք իմանում ինչու Մատթէոսն իրան պարտական էր համարում այդ մարդն առնել նստել և ժամերով նրա խօսածներին ականջ դնել։ Եւ՝ բանի մէջ ինչ կար լաւ էի իմանում, վերջապէս նկատողութիւն արի Անդրէաս հայր սուրբին թէ այս մարդն ինչ կուզէ, Անդրէաս ինձ համամիտ ցոյց տուաւ իրան այդ նկատողութեանս և ասաց, վեհափառն էլ ձանձրացաւ այդ մարդու շատախօսութենէ. — թէ այդպէս է ինչու ճամբայ չդնել. — այս մարդն էլ կուզէր համոզել Կաթողիկոսին որ Էկզարխին այցելութիւն անէ, և թէ մի մեծ պարտաւորութիւն է Ռուսիայում առաջ քաղաք մանողին դնալ մեծամարդկանց մօտ մեծարանք մատուցանել, և թէ Ռուսաց տէրութիւնը Հայոց շատ կը պատուէ ու կըսիրէ և թէ նրա ցոյց տուած պատուոյն և սիրոյն օրինակ Հայոց մեծ ատիճաններ է տուած, կաթողիկոսներին, եպիսկոպոսներին նշան նշանակութիւն է տուած, արտօնութիւն կառքերով, սպասաւորներով ման դալու, վերնին չքանշաններ կախ անելու, ժողովրդէն անկախ լինելու, թագաւորական ռոճիկ ունենալու և այլ այսպէս խօսքեր կը կարդայ եղել Աբէլ Գուրդէնբէգեանցն Մատթէոսի դլխին, որպէս զի նրան որչափ կարենայ մօտեցնէ Ռուսաց կառավարութեան։ Երբ Անդրէասի հետ ներս սենեկումը մնանք, այդ մարդը վեր կայաւ գընաց, վեհափառն էլ իր դործին։ Նոյն երեկոյեան Լուսու Մէլիքեանցն և ուրիշ մի քանի մեղ անծանօթ մարդիկ էլ եկան, Լուսու Մէլիքեանցն Կաթողիկոսի հետ կամեցաւ որ առանձին մի տեսութիւն անէ, այդ տեսութիւնը շատ չտեւեց և Մէլիքեանց ճդռուած դուրս եկաւ սենեկէն, Մատթէոսն իր լկամն արձակել էր երեւում Մէլիքեանցի ձեռնէն, խօսակցութիւնը մի փոքր ժամանակ դէս ու դէնէն լինելուց յետոյ դարձաւ Էկզարխի անելու այցելութեան վրայ, Մատթէոսն ոչ այո՛ էր ասում և ոչ էլ՝ ոչ, այդ մասին հարցասէրներին երկրայութեան մէջն էր թողում, թէ և նրանք ապահով էին իրանց վրայ որ կարող կը լինին իրանց կողմը քաշել վեհափառին, երբեմն Լուսու Մէլիքեանցն խօսքը դէպի ինձ ուղղելով իրը թէ իմ համամտութիւնն էր խնդրում, ես լռութեամբ էի պատասխանում, լռութենէս բան չհասկացաւ, ուստի և իր կաս-

կածին վրայ իմ մասին աւելի հաստատուեցաւ։ Մատթէոսը սաստիկ երեսը կախ էր արած ինձ համար, երբ այցելութիւնը մեկնեցան, մօտը գնացի և կամեցայ երկու խօսք անել, տեսայ որ անհնարին է, դէմքը չէր ծիծաղում, թողեցի և դուրս ելայ։ Նոյն իրիկուն իրիկնաճաշը մի քաղաքացւոյ տանն անելու էի հրաւիրուած, ուստի շտապեցի ու գնացի այն տեղ։ Զարմացայ երբ տեսայ նախընթաց օրուայ բաղմութիւնն այն տեղ հաւաքուած և մի այնքանով էլ կրկնապատկած, մեծ քաղաքավարութեամբ ընդունեցին ինձ և համբաւ հարցուցին Կաթողիկոսի կողմէն, ոչինչ չեմ իմանում ասացի միայն թէ այսօր շատ մարդիկ եկան այցելութեան—վերջապէս էգուց վեհափառ տէրը Էկզարկին պիտի գնայ Պ. Ազարէգեանց—չեմ իմանում—հիմա մենք իմացանք, որ պէտք է գնայ Լոռու Մելիքեանցն մեր բարեկամներէն մէկին տանն էր, այն տեղ ասաց—զարմանալի բան կարելի է վեհափառը նրան խօսք է տուել—հրամել է խօսք է տուել էգուց անպատճառ գնալ Էկզարխին—այս խօսքերն ասում էին և տխրութեան ժանգն էլ ամենքին երեսի վրայ պատել էր, անիծում էին Ջալալեանցին, վայ էին կանչում իրանց գլխին—ո՞վ կը համարձակի դէմ դնել այդ բանին ասում էին, միայն թէ Կաթողիկոսն ինքը պէտք է որ չհաճի ու դէմ դնէ . . . էլի նորէն հարց և փորձ էին անում թէ ո՞վքեր էին այն օրը վեհափառի մօտ եկողները և թէ ի՞նչ էին ասում նրան։ Հարկաւորութիւն չունէին ինձմէ նոր բան լսելու, վասն զի արդէն ամեն բան իրանց յայտնի էր, մինչեւ իմ խօսակցութիւնն Անդրէաս վարդապետի հետ Գուրգէնբէգեանցի մասին իմացած էին և դրանով մխիթարուած, կրկին կրկին հարցու փորձ էին անում Մատթէոսի ընաւորութեան վրայ, շփոթում էի և չէի իմանում ի՞նչ պատասխան տամ, վերջապէս ասում էի, փոքր մարդ է Մատթէոսը, բայց թէ իր հաւատի վրայ հաստատուն է, այդ բանի համար կը վկայեմ, կեցցէ՛ ուրեմն, կեցցէ՛, պղաւումէ՛ին և իրանք իրանց մխիթարում, բայց սակայն այն իրիկունն էլ այնքան խօսեցան, այնքան խօսեցան որ կէս գիշեր երկու ժամ անց էր կացել դեռ չէին վերջացուցել իրանց խօսակցութիւնը, վերջին աստիճան յուսահատուած էին և մի և նոյն ժամանակ ոգեւորուած և մտներումն դրած ինչ որ լինի, լի-

նի, արդիլել Մատթէոսի այցելութիւնն Էկզարխին, ուստի ո-
րոշեցին, որ միւս օրն էլ իրանք գնան Մատթէոսի այցելու-
թեան և իրանց միտքը յայտնեն բացարձակ, հակառակ նա-
խընթաց օրուայ այցելուների առաջարկութեան։ Այդ շատ
լաւ կը լինի ասացի և ես, ես էլ այն տեղ կսպասեմ ձեզ և մի
առ մի կը ներկայացնեմ վեհափառին, շատ լաւ ասացին և
այնպէս ցրուեցան։

Միւս օրն առաւօտեան ժամը ութին վանքումն էի, ար-
դէն Ջալալեանցի լրտեսները բակումը, դաւթումը մեն էին
գալի լրտեսելու թէ ով է մտնում վեհափառի մօտը։ Մեր ան-
ծանօթ բարեկամներէն արդէն մի քանիսն եկել էին և ոմանք
Մակար եպիսկոպոսի, ոմանք Յարդիս եպիսկոպոսի մօտն էին
գնացել, ուղեցի ես մի անդամ վեհափառի մօտ գնալ, սպա-
սաւորն ասեց թէ, խբոխ է եղած հանգստանում։ Հարցնողին ինչ
պէտք էի ասել չէի գիտեր։ Այս միջոցին Պ. Գրիգոր Իզմիր-
եանցն եկաւ և կամեցաւ վեհափառի ներկայանալ. դուռը
բաց արինք սենեկին և Պ. Իզմիրեանցին դէպի վեհափառի
մօտն տանելով նրա ով լինելն ու ի՞նչպէս անձ լինելը ասա-
ցինք թէ չէ, Մատթէոսը սաստիկ տաքացած մեզ դէմ—դու
դուրս եկ, ասաց—շատ լաւ, վեհափառ տէր, ասացինք ու
արմնալով դուրս եկանք, ոչ թէ միայն իր ներկայութենէն՝
այլ նաեւ վանքէն, և մեր պարկոնն ու պուրկովը տեղափո-
խեցինք մինն էլ բնաւ ամենեւին ոտք չդնելու մտքով վանքը
և ամենեւին Մատթէոսի երեսը չտեսնելու։

Այսպէս առաջին անդամ մեր և Մատթէոսի մէջ եղած
կապը քանդեցաւ ինչպէս որ արդէն դուշակել էի և օրն էի
սպասում։ Ջալալականք ուրախ եղան, մեր անծանօթ բարե-
կամներն տխրեցան, թէ նրանք և թէ սրանք սխալում էին.
մինը կարծեց, որ իր էշն անարդել յառաջ կը քշէ, միւսն էլ
կարծեց, որ մի կողմէն ներդործող անձն չլինելով ընդդէմ
Ջալալականաց, բանը դէպի վատթար կերթայ, բայց այնպէս
չէր, ես հիմա շատ աւելի աղտոտ ու համարձակ էի ներդոր-
ծելու քան թէ իմ ծառայական պաշտօնիս մէջ, ամեն ժամա-
նակ մի արտառոց մարդու կամակատարն լինելով և կարող էի
ինչպէս որ կամենայի աշկարա կռուել ազգի և եկեղեցու ծա-
խողների դէմ և իմ այդ համարձակ և ակներեւ գործողու-

թիւնը բաւական էր ամեն բան կանգնեցնելու, ինչպէս որ եղաւ էլ։ Այն օրն ամենուին Մատթէոսին չերեւեցայ, միայն Մակար եպիսկոպոսին և Սարգիս եպիսկոպոսին իրողութիւնը հասկացուցի և մեր մէջ անցած բաները էլ իմաց արի նրանց։ Մակարը քթի տակով ծիծաղեց, ոչինչ բան ասաց, բայց մի կողմէն ուրախ եղաւ որ ես հեռացայ Մատթէոսէն, Սարգիսը (Անդրիանուպօլսոյ առաջնորդ) ոչինչ բան չհասկացաւ. Էկզարխին այցելութիւն եղել է չէ եղել իրան համար մի և նոյն բան էր. իսկ ինձ ճամբայ է տուել Մատթէոսն նոյնպէս ոչինչ նշանակութիւն չունէր իրան համար թէպէտ ես արցունքն աչքերումն էի գանգատում. այսպէս եպիսկոպոսներն կը վարձատրեն ասում էի ազգին և եկեղեցու ծառայողներին—ոչինչ որդի, ոչինչ ասում էր, պէտք է համբերութիւն ունենալ. չէս գիտեր անոր բնաւորութիւնը իշտէ ատանկ մարդ է—լաւ գովեստ և դատաստան։ Նոյն օրը երեկոյեան ուշ ժամանակ, Թէոդորեան Սարգիս վարդապետը կառք նստած եկաւ ու գտաւ ինձ ուր որ ես էի—ո՞ւր ես այդ, ասաց. վեր կաց շուտով, Վեհափառը քեզ կուզէ—անհնարին բան է ասացի, ես էլ բան գործ չունիմ այդ Վեհափառին հետ, ուստի չեմ գալ վանք և չեմ էլ ուզել տեսնել նրա երեսը—այդ ի՞նչ կըսես, Իզմիրցի ասաց Թէոդորեան վարդապետը, դու ինձ պէտք է պատիւ անես, դու իմ առաջին աշակերտն ես, և այդպէս կը վարուիս Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ, կը մտանա՞ս որ մենք շատ լաւ գործեր ունինք տեսնելու—Հայր սուրբ, Հայր սուրբ, ասացի, քո Վեհափառը Ռուսաց Էկզարխին կուզէ երթալ, որովհետեւ դէմ դրի, ինձ խայտառակեց ու դուրս հանեց իր առջեւէն, գիտե՞ս—խեղճ Սարգիս վարդապետը չէր հասկանում ի՞նչ եմ ասում—տէ՛ լաւ, ասաց, վեր կաց գնանք—ո՞չ ասացի գնա՛ ասա՛ Վեհափառին թէ Էկզարխին չգնալ, կը գամ իր մօտ և աչն էլ կը համբուրեմ. իսկ թէ որ Էկզարխին պիտի գնայ, ես նրա որդին, զաւակը չեմ—հա՛ պիտի երթայ ասաց, Սարգիս վարդապետը—էհ, ուրեմն ես էլ պիտի չգամ ասացի իրան. գնա՛ ու այսպէս ասա—Սարգիս վարդապետը, Լոռու Մելիքեանցի և Ա.յվազովսկու խաբուածն էր, ուստի հարկաւ նրանց պէս հայեցուածք կունենար Մատթէոսի անելու այցելութեան վրայ Էկզարխուն։

Այս խօսքերէն յետոյ բաժանեցաւ ինձմէ Յարդիս վարդապետը և խօսք արաւ, որ միւս օրն առաւօտանց չայը միատեղ խմենք Լուսու Մէլիքեանցի տունն ուր որ կը բնակէր ինքը և յետոյ վեր կենանք գնանք ասում էր, միասին Կաթողիկոսի մօտ, որովհետեւ նա էր հրամայած որ գնամ և աչը համբուրեմ, շատ լաւ ասացի դու իմ հայրն ես, պէտք է որ հնազանդ լինիմ քեզ և իրօք էլ այնպէս արի։ Միւս առաւօտանց գնացի Լուսու Մէլիքեանցի տանը, ուր տեղ էին նաեւ Գաբրիէլ վարդապետը և ինքը Լուսու Մէլիքեանցն, գնացի նախ Գաբրիէլ վարդապետի աչը համբուրեցի, ինձ իր կշտին նստեցուցնել տուաւ, յետոյ ասաց թէ շատ սառնութեամբ եմ վարուում իրան հետ և թէ ինքն ամեն տեղ իմ վրայ գովելով է խօսում իբրեւ Մուրատեան վարժարանի առաջին պտուղներէն մինը և թէ միշտ կը ցանկայ, որ ես իր մօտն գնամ։ Այս խօսքերն ասելու վրայ էր Գաբրիէլն ինձ, երբ Լուսու Մէլիքեանցն ներս մտաւ. օ, Պ. Աղաբէգեանց բարի էք եկել ասաց ֆրանսերէն, ի՞նչպէս էք լա՞ւ էք ասելուց յետոյ, հարցուց թէ վանքէն եմ գալի—ոչ, ասացի—Կաթողիկոսին չէ՞ք տեսել—նմանապէս—չըլնի թէ վշտացուցած է ձեզ—այնպէս մի բան—Լուսու Մէլիքեանցն, Գաբրիէլ և Յարդիս վարդապետներն սկսան ծիծաղիլ։ Լուսու Մէլիքեանցն ձեռնէս բռնեց արի՛ քեզ բան ունիմ ասելու, ասեց ֆրանսերէն և իր սենեակը տարաւ, այդ սենեակը թէ և մի բաղմոց կար կողէնքի ձեւով, բայց կատարեալ մի զինարան էր, բոլոր պատերը, սրերով, թրերով, հրացաններով և այլ հին և նոր զէնքերով զարդարուած էին. ինքը ոտի վրայ կանգնած սկսաւ խօսիլ հետս Կաթողիկոսի վարմունքի վրայ։ Այս ի՞նչ խայտառակութիւն է, ասում էր, դրա արածը, Պօլիս ամենանշին ամիրաներին ձեռին էր տալի իր մօրուքը որ բզքտեն, ամենաչինչ մարդու շողքորթութիւն էր անում և մարդելուզութիւն, որ ամիրայն կամ որ սառաֆն որ իրան մի բան կասէր ձեռին մի քանի բան տալով, ուզածն անել էր տալի իրան. ի՞նչ եղաւ հիմա այս տեղ որ եկաւ, ուրի՞շ Մատթէոս եղաւ. նոյն մեր գիտեցած քսփուս Մատթէոսը չէ՞, խնդրեմ քեզմէ յանուն Աստուծոյ, գնաս, աղաչես իրան, ու ասես, որ ամօթ է. պէտք է անպատճառ գնայ այցելութեան Ռուսաց

Էկզարխին։ Այս խօսքի վրայ դոյնս փոխուեցաւ, բերանս էլ պապանձեցաւ, ծնկներս դողում էին, համբերեցի։ բայց չէի իմանում թէ արդեօք մինչեւ վերջը պիտի կարենամ դիմանալ։ Իմ այլայլութիւնը նշմարեց Մելիքեանցը, ու ձեռնէս բռնելով, «ասա՛ խնդրեմ Պ. Աղաբէգեանց այնպէս չէ՞, իրաւունք չունիմ, մի քանի տղայ փիլիսոփաներ դուրս են եկել մեր քաղքումը, կուզեն համոզել եղել Մատթէոսին, որ իր գլուխ ծանր պահէ էկզարխին, մէկզարխին այցելութիւն չդնայ թէ յետոյ Ներսէս կաթողիկոսի պէս խաղալիկ կը դառնայ կառավարութեան ձեռին։ նա այսպէս չէր անում, ասայ, Մատթէոսն էլ ինքն իրան մեր փոխարքայի աչքէն հանում է, էդ դուց էլ օր, օրինակի համար երբ մի խնդիր կունենայ, նա էլ չկատարել, շատ հաւանական է, որ քեզ համար մի նշան ուզենայ վարը իբրեւ վարձատրութիւն, ինչպէս ես էլ ասել եմ այդ մասին թէ դու արժանաւոր մէկն ես, փոխարքայն չկատարելով Մատթէոսի խնդիրքը, դու էլ կը զրկուես այդ փառքէն։ Այս խնդրեմ, յանուն Աստուծոյ, դնաս խօսք հասկացուցնես այդ ծերունուցն, որ անպատճառ այսօր էկզարխին դնայ, վասն զի միւս օրը մեծ ճաշ պիտի տայ իրան քաղաքը, պէտք է որ նա էլ այն տեղ դանուի, ես այսօր առաւանց մարդ զրկեցի, իմանալու համար թէ պիտի գնայ թէ ոչ, չեմ հասկանում ինչ մարդ է, ո՞չ այո՞ է այո՛ և ո՛չ, ոչն, անցած օր պատրաստ էր իրան ցոյց տալի ամեն կերպով շնորհակալ անելու Ռուսաց կառավարութեան, այս օրերը փոխուել է, դնա՛, դնա՛ խօսք հասկացու դրան, ապա թէ ոչ էլ ոտք չեմ դնել Հայոց վանքը, և ամենեւին Հայոց ազգի լաւութեան համար չեմ աշխատիլ»։ Այս խօսքերը Լոռու Մելիքեանցն Ֆրանսերէն էր ասում, բայց այդ մարդն որ այդքան տաք տաք կպել էր Մատթէոսի այցելութեան էկզարխին, զարմանքս տանում էր, և դրա համար որ ցածրանում էր և ինձ համոզելու էր աշխատում, նշան մշան ստանալու խոստմունքներով և իմ պատուասիրութիւնը զրգռելով, յիրաւի ծիծաղս բերաւ, և յառաջ որ բարկանում էի բոլորովին անյոգ եղայ, հա՛ ասայի ինքնիրանս, այս զօրապետներն էլ երեւայեն եղել, ինչպէս կամիոլիկոսներն ու եպիսկոպոսները, բայց ոչ ինչ չցոյց տուի Մելիքեանցին։ ընդհա-

կառակն հիանալ ցոյց տուի, որ Լուռու Մելիքեանցն ինձ համար այնպէս լաւ է մտածում և իմ օգուտն փնտռում—լաւ ասացի, հիմա, որ պիտի գնանք Սարգիս վարդապետին հետ Կաթողիկոսի մօտ այդ մասին առանձին կասեմ իրան, բայց թէ որ ինքը միտքն է դրել Էկզարխին այցելութեան չգնալու, կը յուսամ, որ կարող լինիմ նրան համոզել, — վա՛յ, ասայ չեմ գիտեր դեռ նրա բնութիւնը, որ փոփոխական է և օրը ասան անդամ կարելի է նրան շուռ տալ ինչպէս մի երեխայ, —տես նենք ասացի ու դուրս եկայ սենեակէն, չայը պատրաստ էր ամենքիս միասին անոյշ արինք, դէսուդէնէն խօսք զրուցարինք, իմ մասին հարցուփորձ արաւ Մելիքեանցը, թէ ուր տեղ եմ և որո՞ւ հետ ես տեսութիւն անում, արդէն նա ամէն բան գիտէր, բայց ինքն իրան ինձմէ շատ բարձր, խելօք և խորահայեաց համարելով բանի տեղ չէր դնում ինձ և իմ նշանակութիւնը, և այդ բանը լաւ էր, բայց շատ երկար չէրը չեց շուտով հասկացաւ իմ նշանակութիւնը և այն ջնջելու աշխատեց։

Գնացինք վանք Սարգիս վարդապետին հետ, Գաբրիէլն էլ պատրաստուում էր մեր քամակէն գալու ես ուղղակի Մակար եպիսկոպոսի խուցը գնացի, Սարգիս վարդապետը նստեցրեց Կաթողիկոսին։ Վանքին մէջ պատրաստութիւն կար իբրեւ թէ Կաթողիկոսն Էկզարխին և ուրիշներին այցելութեան պիտի գնայ։ Մակարը մեզ հարցուց թէ ինչու աներեւան եմ եղել և թէ այդպէս շուտով ինչո՞ւ եմ ճգտուում. ճգռուած եմ ասացի, հայր սրբազան և սաստիկ ճգռուած, եթէ Մատթէոսը Էկզարխին կը գնայ։ Վեր կաց, ասաց, արի հետս գնանք Վեհափառի մօտ, ինձ հարցնում էր երեկոյեան քո մասին։ Այս միջոցին Սարգիս վարդապետը ներս մտաւ, եկու Պ. Մարկոս ասաց Վեհափառը քեզ կուզէ, պիտի դայ ասաց Մակար եպիսկոպոսն ու երեքնիս միասին գնացինք Կաթողիկոսի մօտ։ Ինձ տեսաւ թէ չէ, «ծո՛ Իզմիրցի, ես շատ ըրի, ասաց մեզ ծիծաղելով, եկուր քովս, ձեռքս պադ, ինչո՞ւ խրրպանմիշ կըլլաս, իմ թապիէթս չես առել, ինձի, իմ զաւակս Անդրէաս հայր սուրբը աղէկ գիտէ»։ Գնացի ձեռքը համբուրեցի, և ասացի, Վեհափառ Տէր Էկզարխին պիտի գնա՞ թէ ոչ, ծիծաղելով պատասխան տուաւ թէ՝ նայինք։ Վեհափառ Տէր,

նորէն կասեմ, որ Հայոց Կաթողիկոսին չվայլեր տաններկու տարուայ առաջնորդին տալին դնալ, նա քեզ մի սարկաւագ անդամ չղրկեց քո դալուստը բարեմաղթելու, այդ ի՞նչ քաղաքականութիւն է, էլ քրիստոնէական պարտաւորութիւն չկայ եպիսկոպոսների համար, այս ի՞նչ բան է, տէ՛ լաւ, սուս կաց, ասաց Մակար եպիսկոպոսը։ Այս միջոցին Սարգիս Ջալալը ներս մտաւ ու ասաց, ամեն բան պատրաստ է, վեհափառ Տէր։ Այս ասաց և Կաթողիկոսի առջևն եղած դրասեղանի վրայ մի թուղթ դրաւ, որու վրայ որոնց որ այցելութեան պիտի գնար նրանց անուններն էին գրուած։ Այվազեան Գաբրիէլ վարդապետեան եկած էր, նմանապէս միւս եպիսկոպոսներն ու վարդապետները հաւաքուել էին, Պ. Ց. Ղայթմազեանցն էլ էր եկած, մի և նոյն ժամուն Գուրգէնբէգեանցը, Թահիրեանցը և Դաւիթ Սուրէնեանցն էլ Ջալալի խցումն էին եկել և խորհուրդ անում Կաթողիկոսին համոզելու Էկզարխին գնալու համար։ Արդէն թիֆլիզը Հայոց ժողովրդին մէջն էլ տարածուել էր որ այն օրը ամենայն Հայոց Կաթողիկոսը Ռուսաց Էկզարխին այցելութեան պիտի գնայ։ Էկզարխն ինքն էլ որ գիւղումն էր, լսելով որ Կաթողիկոսն իր տանն պիտի գնայ տեսութեան, մին օր յառաջ ըստ բարձրագոյն պատուէրին մինչև քաղաք էր իջել և պատրաստուում էր, ինչպէս ասում էին Թիֆլիզցիք, Կաթողիկոսի այցելութիւնն ընդունելուց յետոյ, միւս օրը քաղաքացոց Մատթէոսին տրուելու ճաշումը նրա կշտին դանուիլ։ Կաթողիկոսը, Սարգիս Ջալալի բերած թուղթը վեր առնելով սեղանի վրայէն, մեր ձեռին տուաւ կարդալու և հարցուց թէ այդ ի՞նչ բան է, թղթի վրայ գրուած էին այս յետագայ անունները Նորին բարձր Գերազանցութեանց, Իշխան Օրբէլեանի, կենդրալ Կուզէնշթէյն, կենդրալ Միլլիութին և Նորին բարձր սրբազնութեան Թիֆլիզու Ռուսաց առաջնորդին։ «Աղէկ, ասաց, Կաթողիկոսը վար դէր»։ Այս միջոցին Պ. Ղայթմազեանցը ներս մտաւ, դուրսն էին կանգնած Ջալալեանցն, Այվազեանցն, Մակար եպիսկոպոսն և ուրիշ մի քանի վարդապետ և քահանայք։ Մատթէոսն պարոն Ղայթմազեանցին թուղթը ցոյց տալով, ասաց, որ կարդայ բարձրաձայն, երբ սա Էկզարխին անունը արտասանեց։ Աւրէ՛ այդ անունը, պղա-

ւեց Կաթողիկոսը, Ռուսաց առաջնորդին չեմ գնալ, նա ինձ և ոչ մի սարկաւագ ուղարկեց իմ գալուստը շնորհաւորելու, հէ՛ անանկ չէ՞, ի՞նչ կըսես զաւակս։ Պարոն Ղայթմազեանցն, որ Ջալալի, Թահիրի, Դուրգէնբէգեանցի և ուրիշ նշանաւոր մարդկանց կողմէն Մատթէոսի մօտն էր եկել համոզելու նրան Էկղարխին գնալու, այս որ լսեց, շփոթեց և ասաց Կաթողիկոսին։ Այ՛ վեհափառ Տէր չվայելեր ձեզ որ Էկղարխին ոտին գնաք, կեցցէ՛ս դու Ղայթմազեանց ասացի, խնդրեմ՝ գնաք այդ բանը և Այվազեանին, Ջալալեանցին և Թահիրեանցին ասէք, վասն զի նրանք կամենում են, որ վեհափառը Էկղարխին գնայ, քաղաքականութիւնը կը պահանջէ, ասելով։ Այս խօսքին վրայ Պ. Ղայթմազեանցը դուրս ելաւ հարկաւ Ջալալեանց իմաց անելու Մատթէոսի որոշումը։ Ջալալը լրբութեամբ ներս մտաւ—վեհափառ Տէր, ասաց բարձրաձայն, պարտաւոր էք Էկղարխին այցելութեան գնալու և անպատճառ պէտք է, որ գնանք, Ռուսաց օրէնքըն այնպէս է որ դրսէն եկողն է պարտական քաղաքի մեծամեծների այցելութեան գնալ և քաղաքականութիւնն էլ այնպէս կը պահանջէ—Ո՛չ, ամենեւին, պղաւեցի Ջալալեանցի երեսին, քաղաքականութիւնն այդպէս չպահանջեր, այլ կը պահանջէ, որ տասներկու տարուայ մի առաջնորդ գայ և Գրիգոր Լուսաւորչի յաջորդին աջը համբուրէ և օրհնութիւնն առնէ—Ա՛ռայ դու չես գիտեր քաղաքականութիւն ասաց մեզ Սարգիս Ջալալը—Ներեցէք, Հայր սրբազան, ես, ասում եմ, որ դուք չէք իմանում թէ ի՞նչ է քաղաքականութիւն։ Եթէ Ռուսաց կառավարութիւնը քաղաքականութիւն ունի, պէտք է Քրիստոսի մի նախնական եկեղեցւոյ հայրապետին քաղաքականութիւնն յարգէ, և իր օրէնքն Հայրապետական օրէնքին ղոհէ։ Փոխարքային գնալ, նրա վոխանորդին գնալ այցելութեան՝, հասկացուում է, իբրեւ քաղաքական օրէնք, բայց մի չորս միլիոն ազգի հոգեւոր հայրն ու տէրը մի քաղաքի եպիսկոպոս առաջնորդին ոտին գնալ, ամենեւին եկեղեցական քաղաքականութիւն չէ, այլ ցածութիւն, մարդելուզութիւն—Այս խօսքերն այնքան կրակուած էի ասում, որ այն տեղ բոլոր լսողները ափիբերան մնացին, Սարգիս Ջալալը պատ կտրուեցաւ, Մատթէոսը քթի տակո-

վը ծիծաղում էր, ա՛, Իղմիրցի՛, Իղմիրցի՛, ասում էր Թէոդորեան Սարգիս վարդապետին։

Ա.ինպէս գիտենա՛ք Սրբազա՛ն, ասացի Ջալալեանցին, եթէ երբէք վեհափառի կարգը դէպի Ռուսաց առաջնորդարան երթալը կը տեսնենք բռնի յետ կը դարձնենք։ Ջալալեանցն ոչինչ պատասխան չտուաւ և թողեց գնաց, ես էլ քաշուեցայ գնացի։ վանքի մեծ զանգակը խմաց արաւ քաղաքին որ Հայոց Կաթողիկոսը վանքէն դուրս է գալի, վերջին անգամ Անդրէաս հայր սուրբին տեսայ,—Հա՛յր սուրբ ասացի՝, բոլոր իմ յոյսը քո վրայ է—անհոգ եղիր, ասաց և յիրաւի մի կամ երկու ժամ յետոյ նորէն վանքի մեծ զանգակն զընգզընգաց։ խսկոյն վազեցի գնացի վանք։ Անդրէաս Հայր սուրբին տեսայ թէ չէ՝ հարցուցի, ո՛չ, ասաց։ չգնացինք։ Ես էլ դիտէի իսկ որ չէին գնացել։ Ջալալն էլ նորէն տեսայ ժանգն երեսէն դեռին էր թափուում, ակռէքը կճրտացնում էր իմ վրայ։ Եկաւ մօտս—որդի՛, ասաց։ ախր դու չե՞ս գիտեր Ռուսները, շատ վատ արաւ որ վեհափառը չգնաց Էկզարխին, փոխարքայն և մեծամեծները բէդամախ կը լինին (կը վերաւորին) և եթէ էգուց էլ օր (վաղը միւս օր) վեհափառը մի խնդիրք ունենայ չեն կատարել և Հայոց ազգին վնաս կը հասցունեն—, ինչպէս թէ վնաս կը հասցունեն, հարցուցի Ջալալեանցին—այ՝, ասաց՝։ ո՛չ նշան կը տան, ո՛չ ասոիճան, և մեր ծառայողներին յառաջ չեն տանիլ։ եթէ երբէք, վեհափառը քեզ համար մի նշան ուզենայ փոխարքայէն կը մերժէ նա։ ինչ կանենք, այն ժամանակ—ոչինչ ասացի թող չունենանք նշան, միթէ մեր հայրապետները նշաններ էին կրում։ Սակայն Պարթեւը չէր որ Պարսից վեռամ արքային նուէր տուած ոսկիները մերժեց։ «Արծաթ նորա նմա լիցի» (1)ասելով։ Այս ի՞նչ բան է, այս ո՞ւր ենք հասել, Սրբազա՛ն Հայր։ Մեր Հայոց ազգին առաքինութիւն և խմաստութիւն հարկաւոր է և ոչ նշան—Այս ու այսպէս խօսքեր ասելով հեռացայ նրա կըշտէն։ Բայց լաւ նկատեցի, որ սաստիկ նեղացած էր իմ վրայ և չէր քաշում իմ ներկայութիւնը կաթողիկոսի մօտ։ Այն օրը հրաւիրուած էի ճաշու Պ. Յ. Ղայթմազեանցի մօտ։ սրա մայրն

(1) Տե՛ս Մովսէս Խորենացու պատմութիւն Հայոց, Գիրք Գ. Գլ. ԻԵ, Երես 556. Տպագր. Վենետ։

ու եղբայրը ծանօթ էին ինձ առաջուց, լաւ ընդունելութիւն արին ինձ։ Պ. Ղայթմազեանցն ասում էր ինձ որ եթէ կաթողիկոսը Ռուսաց Էկզարխին այցելութեան գնար, իր արածն վատ ներդործութիւն կանէր Թիֆլիզու Հայոց ժողովրդին մէջ, միայն ասում էր նա մի քանի փառասէր մարդիկ դոհ կը լինէին այդ բանէն, ուստի լաւ արաւ որ չգնաց, խնդրեմ, ասայի նրան այդ խօսքը Զալալեանցին ասէ՛ք — ասացէ՛, ասայ—։ Բայց Զալալեանցն այնքան կուրացած էր փառամոլութենէն, որ Ղայթմազեանցի խորհրդին մտիկ անող չէր։ Ճաշէն յետոյ իրիկուայ դէմ մի փոքր դուրս եկայ հրապարակումն, ամեն մարդ Հայոցմէ, գովութեամբ էին խօսում Մատթէոսի վրայ, կեցցէ՛ նա, ասում էին զօչախ (քաջ) մարդ է եղել, թող արաքուին վասակները, որ կամենում էին մոլորացնել կաթողիկոսին, այն իրիկուն Մատթէոսի կենացը համար կարելի է որ հարիւր թունկի գինիէն աւելի խմուեցաւ Հայոց մէջ, միայն իմ եղած տեղն ուր քսան հոգիէն աւելի էին, մօտ քառասուն յիսուն շիշ գինի խմուեցաւ ամենքն էլ Հայոց կաթողիկոսի, Էջմիածնի ամոռին, Հայոց ազգի, Նրա ուսումնասէր որդուոյը կենացը համար արեւ խնդում անելով։

Ահա այսպէս առաջին անգամ Մատթէոսը զգայուց Ռուսաց կառավարութեան, որ ինքն Ամենայն Հայոց կաթողիկոս է և ոչ թէ միայն Ռուսահայոց և թէ Արեւելեան աշխարհի ամենէն նախնական հայրապետների յաջորդն է և թէ փառք և պատիւ իր աչքերը չեն շլացնել և իր հոգին չեն մոլորացնել և այս բանիս համար մենք էլ այս տեղ յիշատակութիւն կանենք իբրեւ մի արիական գործ Մատթէոսի իր կաթողիկոսութեան ժամանակ։ Բայց թէ Մատթէոսի այդ վարմունքն Ռուսաց կառավարութեան դէմ է եղել և թէ կը վիրաւորուի եղել, ամենեւին տեղի չունի, և շատ էլ սխալուեցաւ այն ժամանակ Կովկասու Ռուսաց կառավարութիւնն որ խկոյն ցոյց տուաւ իր վիրաւորուիլը Ամենայն Հայոց կաթողիկոսէն։ Ընթերցող Հայն լաւ միտք առնէ այս դէպքէն, որ Ամենայն Հայոց կաթողիկոսն միշտ երկու սրի մէջ տեղն է Ռուսիայում, իր եկեղեցու և ազգի բարոյական և ազգային օգուտն ուրիշ կը պահանջէ, իր վրայ տիրող տէրութեան քաղաքական շահն ուրիշ։ Այս երկու պահանջողութենէն, ո՞րն է օրինաւոր և

պարտադիր կաթողիկոսի համար, տէրութեա՞ն է, եթէ ո՛չ ազգինը կամ եկեղեցունը։ Եթէ մի կաթողիկոս տէրութեան շահը մտածէ կատարելու, իր ազգին հոգեւոր և ազգային օգտին պէտք է անպատճառ ՁԼասէ, եթէ իր ազգի կամ եկեղեցու բարոյական և ազգային յառաջադիմութեան հոգտանի, տէրութեան դիտաւորութեանց և պահանջողութեանց դէմ շարժած կը լինի։ Ի՞նչպէս պէտք է անել, Հայոց ազգն իրաւունք ունի, եթէ ո՛չ Ռուսաց կառավարութիւնը, միթէ մեր կաթողիկոսները, առաջնորդները և վարդապետներն իրանց անձնական օգտին համար պէտք է զոհե՞ն ազգի և եկեղեցու ընդհանուր օգուտը. որովհետեւ մի եպիսկոպոս իրաւունք պիտի ունենայ իր կուրծքը նշաններով զարդարել, կառքերով մեն գալ, թանգ մուշտակներ, ծանր կերպասներ հագնիլ, թոշակներ ստանալ, պէ՞տք է որ ազգային բարոյական և մտաւոր զարգացման համար երբէք չաշխատի, ինչ է, տէրութեան տիրող օրէնքն այնպէս կը պահանջէ։ Այս խնդիրը մեր ամենէն իմաստուն եկեղեցականի առջև կը դնենք և կը խնդրենք, որ լուծէ և հետեւութիւնը մեզ ցոյց տայ, վասն զի մեր միտքը չկարող լինում ըմբռնել այսպիսի մի ընթացք։

Միւս օրն որ ուրբաթ էր, առաւօտեան վեհափառի մօտն էի, նա ինձ հետ ոչ վատ էր, ոչ լաւ, ես էլ ոչինչ բանի տեղ չէի դնում նրա վարմունքն իմ մասին։ Այս միջոցին Մ. Լոռու Մէլիքեանցն ճերմակ գտակը գլխին ներս մտաւ կոտրուած, ես իսկոյն միւս դռնէն դուրս ելայ և գնացի ճանապարհը պահեցի ուր տեղէ դուրս պիտի գար. մի փոքր ժամանակէն դուրս եկաւ վեհափառի մօտէն, ինձ տեսաւ թէ չէ սուտ ծիծաղելով մօտս եկաւ և ձեռս թափ տուաւ ու ասաց։ «Էլ իմ գործը պրծաւ, ես էլ ձանձրացայ, ինչ որ էր իմ պարտքը կատարեցի, գնում եմ գլուղումն հանգստանալու, մնաս բարև Պ. Աղաբէգեանց, վերջապէս ծերը (Մատթէոսի համար էր ասում) էկզարխին չգնաց մտիկ անելով ձեզ նման երիտասարդ փիլիսոփայների խօսքին»։ Այս խօսքն ասաց ու հեռացաւ, ես էլ քամակէն, երիտասարդ կեներալների խորհուրդը վատ էր նրա համար, պղաւեցի։ Բայց սակայն պէտք էի սպասել այս վասակներէն իմ վարձատրութիւնը ստանա-

լու, ստացայ։ բայց թէ ի՞նչպէս, ընթերցողը կիմանայ այս յիշատակարանիս ընթացքումն։ Նոյն օրը Մատթէոսը քաղաքացւոց հրաւէրին պէտք էր որ գնար, հրաւէրը պատրաստուած էր քաղաքի քլուղումը, այսինքն քաղաքացւոց և աղնուականաց ժողովատեղումը, (թուղթ, պիլլիարտ խաղալու, պարահանդէս տալու համար) մեծ ճաշ էր պատրաստուած քաղաքի բոլոր մեծամեծների համար Մատթէոս կաթողիկոսի պատճառով։ Մատթէոսը մեղ ոչինչ չէր ասում թէ պէ՞տք է գնամ և ես իր հետ, թէ ո՛չ. զարդն ասելով Ռաներն արքայութիւն երթալու էլ հրաւիրէին ինձ, գնալու կամք չունէի։ Այս իմ կամքը դիտենալով Ջալալեանցը մեր անունը Կաթողիկոսի հետ գնացողների ցուցակի մէջէն կամ հանել էր կամ չէր դրել, կէս օրն անցած էր, երբ վանքի զանգակը վերհափառի վանքէն դուրս դալը խնայ արաւ։ Նոյն իրիկուն մեր ծանօթներէն խմացանք Մատթէոսին եղած ընդունելութիւնն ինչ յանկի լինելը։ Կովկասու Ռուսաց կառավարութիւնն երեխի նման երեսը կախ է արել Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ Էկզարխին այցելութեան չէ գնացել և հէնց այս առթով էլ ցոյց է տուել։ Առանց շքաղդեստի, ամեն օրուայ զդեստով և առանձին շքերութիւն տալու հանդիսին, ընդունել էին Մատթէոսին։ Բարձր պաշտօնաւորների դէմքին վրայ ամենեւին կենդանութիւն չէ երեւել, կարծես ամենքին սիրտը կոտրուած է եղել, Էկզարխին տեղը սեղանի վրայ պարապը մնալուն համար։ Էկզարխին այդ ճաշուն դանուելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելութիւնն ունենալու է եղել սպասում. ուստի սրա համար այդ հրաւէրումը չէ դանուել և նորէն վեր է կացել ու իր դիւղումն է գնացել։ Վերջապէս մի տխուր ու կոտրած ձայնով Մատթէոսի կենացը շափանի են խմել և առանց ճառեր խօսելու և բաժակներ ճրնկճրնկացնելու վերջ են տուել իրանց հրաւէրին և շուտով ճամբայ է ընկել Կաթողիկոսն էլ ու դարձել վանք։ Մինչեւ այս օրն Թիֆլիզու Հայոց դէմքերն ինձ համար սառն ու անտարբեր էին, այս բանն ինձ տխրացնում էր և պատճառը չէի իմանում, հէնց նոյն օրէն Հայոց դէմքերն ծիծաղով էին երեւում ինձ և շատերն էլ բարեւում էին մի մարդավարի կերպով։ Յետոյ իմացայ պատճառը, որ Ջալալ-

եանցն ու իր արբանեակները Թիֆլիզու մէջ տարածել էին թէ Մատթէոսի հետ եկող գիժ (խենդ) Իզմիրցին իրան չէ թողել Էկզարխին այցելութիւն անելու։ Այդ իմ վարմունքը յայտնի է որ տերութենական մարդկանց, ոչ ամենքին, այլ մի փոքր մասին շատ անհաճոյ էր թու

. բայց շատերը ուրախ էին, թէև դրսուանց չէին ցոյց տալի Մատթէոսի արածի վրայ, «խումնա միայն Ռոսի Հայոց կաթողիկոս չէ, ասում էին, հապա՝ Օսմանցու, Ղըզըլպաշու, Ինկլիզու հայոց էլ է, թէ որ լսեն այդ Հայերն մեր հոգեւոր տիրոջը ցածութիւնը և Ռուսաց հետ սաստիկ մտիկնալն ի՞նչ կասեն»։ Այս ասելով, «զօչախ Մատթէոս, ասում էին, Ինկլիզու բասլաւնիկին (դեսպանին) հետ կռուել է հաւատու համար, ի հարկէ Ռուսաց մեծամեծների հետ էլ կու կռուի»։ Ժողովուրդն այսպէս էր դատողութիւն անում իրողութիւնը դրսուանց տեսնելով։

Պիտի շարունակուի։

ԲԱՆԱՔՆՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺԿՂՈՎՈՅՆ

Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն իսկ մարմնոյ և հոգւոյ միաք են կառավար, և որպէս առ մի մարդ՝ այսպէս առ բոլոր աշխարհս։

Եպէլ Պոպ. Վարդանայ։ Երկ. Յեղ.... էր. 19.
ըստ Անդեռասիանցոյ օրինակի։

(Շարունակութիւն. Տես Թիւ Ե. երես 265)։

Մեր ընթերցողները գիտեն, որ մենք՝ Կաթողիկոսական Յանձնաժողովոյն Տեղեկագրի վրայ մեր քննողական հայեցուածքը դարձնելու վրայ էինք, երբ Պ. Յ. Զամուրճեանն ու Պ. Ճ. Ալամեանն իրանց Նկատողութեան անունով յարձակողական գրուածքները հրատարակեցին։ Այս միջոցին մենք, մեր սկզբունքին համաձայն մեր հայեցուածքն դէպի նրանց նկատողութեանց վրայ դարձնելու պարտք համարեցինք, իմանալու համար թէ, ի՞նչ սկզբունքի վրայ են հիմնած իրանց հայեցուածքն այդ Տեղեկագրի վրայ։ Ոչ Պ. Յ. Զամուրճեանին և ոչ Պ. Ճ. Ալամեանին նկատողութիւնքն բղխած էին Հայաստանեայց Եկեղեցւոյ հիմունքէն, սկզբունքէն և իրաւունքէն։ Հայոց ազգի և եկեղեցու պատմական դէպքերն ու անցքերը, նրանց ազգային և բարոյական կեանքն ու հոգին և ամենէն գլխաւորը, այսօրուայ Հայոց բարոյական վերակենդանութեան աղբիւրը, ընթացքն ու զարգացումն, որ պիտի լինի նպատակ, բոլորովին մոռացուել և իրանց դիտողութեանց մէջէն դուրս էր ձգուել։ Առաջինն իր նկատողութեան՝ քաղկեդոնիկութիւնը, երկրորդը քաղաքական նկատմունքն էր՝ հիմունք դրած, այդ կը նշանակէր, ոչ նկատողութիւն անել ազգի կամ եկեղեցու օգտի համար, այլ օտարների ազդեցութեան գործի լինել և միաբանութեամբ կատարուած մի

գործ քանդել ու կործանել օտարների օգտին համար, ուստի և մենք պարտաւորեցանք բանակռուել մեր այդ ընտանի թշնամիների հետ, և նրանց մէջ մեր արտաքին ահարկու թշնամուն դլուխը ջախջախել։ Պ. Յ. Զամուրճեանն ու Պ. Ճ. Արամեանն երբ իրանց քամակը դարձուցած քիթը կախ յետ էին փախչում մեր բանակռուողական դաշտէն, և ահա յանկարծ մի մութ և թագուն տեղէն մի ձայն դուրս եկաւ։ Այդ ձայնը բաւական ժամանակ Պոլսոյ մէջ Ֆրանսերէն լեզուով գրուած սրա և նրա գրպանումն էր մեռած դալի, բայց տեսնելով, որ ոչինչ չներդործում և իր ձայնակիցներն էլ յաղթուած սեւերես դուրս եկան, Հայու կերպարանք առաւ իր վրայ, և իբրև խաղաղասիրութեան ձիթենու ճիւղն էլ ձեռին «ես էլ այս տեղն եմ» ասաց, առանց ինքն իրան ցոյց տալու։ Կարդացին դրա ճակտին վրայ այս խօսքերը։ ՔԱՆԻ ՄԸ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԷՋՄԻԱԾՆԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ՎՐԱՅՕՔ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ։ Այս քանի մը դիտողութիւններ ասնող աներեւան անձն իր ընդունելութիւնը Մ...ի լրագրէն ստացաւ։ Այն ընդունելութիւնը նշանակելի էր մեզ համար, նրա համար՝ որ երեք որոշ կերպարանք էր կրում իր վրայ։ Առաջին՝ նրա գրողն անդամ էր Տեղեկագրի Յանձնաժողովոյն. երկրորդ՝ ամբողջ Հայոց ժողովրդի ձայն էր նա իբրեւ երեսփոխան. երրորդ՝ ազգային և բարոյական լուսաւորութեան հարազատ պաշտօնէի։ Իսկ մենք, թէ որ ճանաչէինք այդ +անէ մը դէ...ը-ՆԷ-ՆԷ աներեւան անձին, ուրիշ բան պիտի չանէինք, այլ փալաժէնիայի պաշտպանութեան համար հարկաւոր եղած թղթերն իրան տալ, որպէս զի տեղեկութիւն ստանայ՝ նրա կազմութեան և հաստատութեան վրայ ու նորէն վեր կենայ օրինաւորապէս և ճշմարտապէս պաշպանելու, բացի սրբամէն իրան իմաց անել նաեւ կարդալ միանդամ մեր հրատարակած ԽՆԴԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ անունով գրքուկը, որու մէջ փալաժէնիայի քննութիւնը տեսնելով ու ըմբռնելով, լաւ հասկանայ Հայոց պահանջածն ի՞նչ է, և յետոյ վեր կենայ Սինոդի, Պրօքուրօրի պաշտօններին ուրիշ կերպարանք տալով ընծայել մեզ, նմանապէս ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան կերպին, նրա երդում ուտելուն

և նրա իբրեւ ընդհանուր Հայոց Կաթողիկոս ունեցած իրաւունքներին վրայ այնպիսի դեսպանական լեզու չբանեցուցէ Թուրքիոյ Հայոց կրկին անգամ խաբելու համար։ Այդ անեբեւան անձին, իրողութիւնը լաւ հասկանալու համար կը հրաւիրենք, փոխանակ 1836 թուի Հայոց վիճակին դիմելու, մի փոքր աւելի յետ դնալ մինչեւ 1720 թիւը, և տեսնել թէ՝ Հայոց ազգը Ռուսաց կառավարութեան Ասիոյ մէջ զօրանալուն համար ինչո՞ւ է արել։ Ամբողջ մէկ դար Հայոց ազգը կեանք, արիւն, ստացուած է զոհել, նրա համար և այսօրուան օրն էլ Թուրքիոյ մէջ եթէ հալածումն է կրում օտարներէն, ուրիշ պատճառէ չէ, բայց միայն Ռուսաց կառավարութեան աւելի անձնանուէր լինելուն քան թէ ուրիշ քրիստոնեայ կառավարութեանց։ Մինթէ սրա փոխարէն մի փալաժէնիայով պիտի վարձատրէր Ռուսաց ամենօրհնեալ կայսրը Հայոց արած ծառայութիւնը։ Թող ցոյց տան մեզ ուսումնասէր Հայերն թէ Հայոց ազգն ո՞ր ազգի համար արիւն է թափել այս վերջին ժամանակներն։ Եթէ Հայոց ազգն Ռուսաց կառավարութենէն բան կը պահանջէ, նրա համար է, որ մի միայն նրա օգտին համար արիւն է թափել, այդ արիւնի ձայնն է այսօր, որ իր թափուած երկրէն օրինաւոր վարձատրութիւն կը դոչէ և ոչ ֆալաժէնիա։։։ և փալաժէնիայով ազգային ու բարոյական զարգացողութեան արգելք։ Մենք, այդ ՔԱՆԻ ՄԸ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ լաւ բանաքննութեան տակը կը դնէինք, բայց որովհետեւ մեր նպատակն այս տեղ այդ չէ, ուրիշ անգամի համար կը թողնենք ու կը դառնանք մեր առարկային վրայ։

Մեր առաջին բանաքննական հայեցուածքին մէջ Տեղեկագրի մասին, մի քանի թղթեր հրատարակեցինք մեր կաթողիկոսներէն ուղղուած ամենամեծ ինքնակալներին։ Այդ բանն անելով կը կամենայինք ցոյց տալ մեր ընթերցողներին իրօրէն, թէ որքան սխալուել են մեր նախորդները, թոյլտուութեան և անխտրութեան խնդրին մէջ։ Դրանք երբէք չեն հասկացել և չեն կարող եղել որոշել ազգային, կրօնական և քաղաքական թոյլտուութիւնը, նմանապէս թոյլտուութիւնն իրանց հարազատ ժողովրդին նկատմամբ, թոյլտուութիւնն օտար ժողովրդների նկատմամբ։ Այս այլեւայլ թոյլտուութիւնքն Յիսուսի Քրիստոսի քարոզած սիրոյն մէջն են ամ-

փոփել, և մի միայն իրանց ժողովրդին ամեն օրուայ անդորրութիւնը դանելու համար ազգային ներկային զսհել են, կամ թէ ոչ՝ երբէք ազգային վրայ չեն միտք տարել։ սրանով ի՞նչ հետեւանք է դուրս եկել Հայոց համար, ազգային կերպարանքի դրոշմին ու հոգւոյն ջնջուիլը Հայոց վրայէն։ Մենք էլ կարող ենք վիպել, որ այսօր Ասիոյ մէջ ի՞նչ դրոշմով, որ կորոշուին Պարսիկը, Թուրքը, Արաբը, Ասորին, Թաթարը, Քիւրան իրարմէ, ամենքն էլ լինելով մահմէտական, այնպիսի դրոշմով, որոշ չէ Հայը Վրաստանի և Ռուսաստանի մէջ, Յունականաց և Պապականաց մէջ։ Հայը մի միայն իր հայրենի աշխարհին մէջ, իր հոգին իր մէջ և իր դրոշմն իր ճակտին վրայ կը կրէ, այն տեղէ դուրս, կը տեսնես որ տեղն որ դնացել է, այն տեղի ազգայինն ու քաղաքականը վեր է առել և իրան համար պահել է, իբրեւ թէ կրօնականը։ Այդ կրօնականն էլ Պապականաց և Յունականաց նկատմամբ թոյլատուութեան զօրութեամբ կերպարանափոխ է եղել։

Այս ասելով խղճի վրայ բռնաբարութիւնը չենք կամենում հաստատել, այլ խղճի ազատութեան ի՞նչ բան լինելն իմանալ։ Վեր առնենք օրինակի համար մեր տեսած երկիրները Ֆրանսիա, Ռուսիա և Թուրքիա, այս երկիրներու մէջ խղճի ազատութիւն կայ։ Բայց ահա ինչպէս կը տարբերին իրարմէ։ Ֆրանսիայում ամեն ազգերն ու ցեղերը մի ազգի մէջ ձուլելու կամ ամփոփելու գործողութիւնը կատարուել է, ոչ թէ այսօր, այլ մի քանի դար յառաջ։ Նորմանդայիք, Բուրգոնեանք, Բրետանք, Կեղտք, ամենքն էլ ամփոփուած են Փռանք ազգին մէջ, թէ կրօնով, թէ ազգայնութեամբ և թէ քաղաքայնութեամբ, ուստի ազգային ազատութիւնն ընդհանուր է եղած և ոչ ցեղերի վրայ և տիրող ազգն որ են Փռանգները ազգայնութեամբ և բարբառով տիրել են ուրիշ ազգերի վրայ և ջնջել են նրանցը։ Տիրող կրօնն է եղել Ֆրանսիական ազգայնութեանը, այսինքն կաթոլիկութիւնը, բայց երբ կամեցել է այդ Ֆրանսիական ազգայնութեան վրայ էլ իշխել, կանգ են առնել տուել իրան իր ընթացքին վրայ նրա ամեն ներդործութեան միջոցներն ու գործիները կոտրատելով։ Այսպէս է որ այսօր լիովին ազատութիւն կը վայելէ պապական կրօնը Ֆրանսիայում, ինչպէս նաեւ բողոքականը կամ ուրիշները, նրա

համար, որ իրանց ներգործութիւնը լոկ հոգեւոր է և ոչ ազգային ու քաղաքական. Նրա համար, որ քաղաքական անթոյլտուութիւնն անգործուն և անարդիւն է արել կրօնների ազգային, բարոյական և քաղաքական ներգործութիւնը. կը նշանակէ, որ քաղաքական և ազգային միակերպութիւնը հաստատելով անթոյլտուութեամբ, հաստատել է խղճի ազատութիւնը։ Մի բռնաբարութիւն ուրիշ բռնաբարութիւնը ջնջել և նրա տեղն է բռնել ու ասուել և ընդունել է իբրեւ օրինաւոր սկզբունք։ Ռուսի պիտի ճանաչենք հիմա Ֆրանսիան ու Ֆրանսիացիքը քաղաքական օրէնքով և իրանց երկրային դրութեամբ կազմուած մի ազգ, որ իր լեզուն, պատմութիւնն երէկուանն է։ Այս է նոր ժամանակուայ քաղաքական ազգը։ Ռուսիա Ֆրանսիու նմանիլ, ոչ ազգայնութեամբ, ոչ պատմութեամբ ոչ այլ և այլ կերպարանափոխութեամբ, ոչ դրականութեամբ. մի խօսքով կարելի է ասել ոչինչ բանի կողմանէ, երկրի բնութիւնն անգամ շատ զգալի կերպով տարբերւում է Ֆրանսիական երկրէն։ Բայց Ռուսիա էլ Ֆրանսիական քաղաքականութեան գնացած մի և նոյն ճանապարհէն է անց կացել, ամփոփումն այլ և այլ իշխանութեանց մի իշխանութեան տակ։ Իշխանութիւն ասելով մի միայն կառավարողների իշխանութիւնը պէտք չէ իմանալ։ Կայ իշխանութիւն, ժողովրդական, հոգեւորական, աղնուապետական, ցեղապետական և մի որ և է կարգի պատկանող մարդկանց, կամ արհեստաւորաց կամ գիտնականաց, կամ աղանդաւորաց կամ թէ փիլիսոփայների։

Ռուսիոյ կառավարութիւնը կամեցել է, որ այդ բոլոր այլ և այլ և իրարմէն որոշ մարմիններն ամենքն էլ մի ձագարի (խունիի) ծակէ անց կացնէ և մի տեղ ամփոփէ, այդ բանը խիստ շուտով է արել, ոչ թէ մի պատրաստուած տեղումն է ամփոփել, այլ Եւրոպիան է օրինակել։ Իր ազգայինը ջնջել է, նմանապէս և ուրիշներինն էլ և ոչ թէ քաղաքական օրէնքով է կապել այդ այլ և այլ մարմիններն ինչպէս Ֆրանսիա, այլ կայսերական, որ կը նշանակէ մի մարդու կամքէն բղխած օրէնքով։ Այդ կամքը տիրապետել է ամենայն զօրութեամբ և բռնութեամբ, ջնջել է, որ և է ազգային, տեղական, ընկերական, կրօնական, կարգական ներգործութիւն և հաստա-

տելով մի մարդու կամայական օրէնքի տիրապետութիւնն առանց որ և է թոյլատրութեան, ներել է խղճի ազատութիւնը, այն էլ անուանով և ոչ թէ գործով։ Ուստի ի՞նչ անէ Հայն իր կրօնական ազատութիւնն երբ եկեղեցի կերթայ և այն տեղ կարդացուած Աւետարանն ու գրքերը չհասկանալ, նոյնպէս Թաթարը, Լէհը և ուրիշ ազգերը. բայց միթէ Ֆրանսիա եւ Անգլիա ու Ամերիկա այնպէս է, ոչ ամենեւին։ Այդ ազգերն ազգային ազատութիւն վարելով իրանց ազգային կառավարութեանց հետ, կարող են հոգեւորով տարբերուիլ, վասն զի իրանց վրայ իշխող կառավարութենէն ստանում են ազգային և միանդամայն քաղաքական դաստիարակութիւն, կրօնականն է միայն որ կրօնականէն են ստանում։ Հապա Ռուսիայում Հայը, Թուրքը և ուրիշ ազգերն իրանց ազգային դաստիարակութիւնն որմէ՞ ստանան, երբ այդ, իրանք իրանց չեն կարող տալ և տէրութենէն էլ չեն կարող ստանալ։ Ի՞նչ անեն՝ այդ յանկի խղճի ազատութիւնը, ոչինչ և ոչինչ։ Ահա այսպէս է մեծին Ռուսիոյ մէջ գտնուած Հայոց վայելած կրօնի ազատութիւնը։ Ռուսիոյ Հայաստանի մէջ ի հարկէ Հայուն համար զգալի է իր հայութիւնն որովհետեւ Հայու երկրումն է ծնում, ընտանեկան կեանքն է միմիայն տարերք իր ազգայնութեան, նրամէն դուրս ամեն կերպով Ռուս է, եթէ այսօր մի փոքր շարժում կայ դէպի ազգայնութիւն, այդ շարժումն էլ ճնշուած է և հաղար տեսակ արգելքների է պատահում։

Դառնանք դէպի Թուրքիա։ Այս տեղ կրօնի ազատութիւնը բոլորովին տարբեր է Ռուսիայէն և Ֆրանսիայէն և դեռ եւս ուրիշ երկիրներէն, մինչեւ այսօր Թուրքիոյ կառավարութիւնն իրմէ կրօնով, լեզուով և ցեղով տարբեր եղող հպատակ ժողովուրդներին լիովին քաղաքական ազատութիւն կամ իրաւունք չէ տուել այնպէս, ինչպէս որ այդ հասկացուում է Ֆրանսիայում և ուրիշ տեղեր, բայց դրա փոխանակ՝ տուած է կրօնական և ազգային ազատութիւն և իրաւունք, թէ Հայուն, թէ Հրէին և թէ Ցոյնին և այս տուած իրաւունքն ու ազատութիւնն եւրոպական սկզբունք չէ։ Եւրոպիան մինչեւ այսօր այդ կէտն ամենեւին նշմարած չունի, որովհետեւ հասկացած չէ, նա քաղաքական իրաւունք կասէ ու կերթայ քրիստոնէից համար։ Մի հարցում կը դնենք մէջ տեղ։ Այ-

սոր վեր կենայ Օսմանեան կառավարութիւնն ու ասէ քրիս-տոնէից։ «Առէք ձեզ քաղաքական իրաւունք և ազատութիւն ինչպէս որ մահմէտականն ունի, բայց դրա փոխանակ, փա-կեցէք ձեր դպրոցները, դադարեցուցէք ձեր ժողովները, Պատրիարքն էլ միայն քահանայ ու վարդապետ ձեռնադրէ ու պատարագ անէ, ընդունեցէք իմ ազգայնութիւնն ինչպէս որ ես ունիմ» մի խօսքով տարբերութիւն, Հայուն, Հոռմին, Հրէին, Բաթոլիկին և այլ հպատակ ազգերին մէջ միայն իրանց եկեղեցիումը լինի. առհասարակ ամենքն էլ իբրեւ Օսմանեան ազգ թուրքերէն լեզուն իբրեւ պարտք սովորին, բարք, վարք, սովորութիւն, ինչ որ քաղաքական է ու ազգային է միակերպ լինի, ինչպէս է Օսմանցւոցը, վերջապէս տարբերութիւնը լինի միայն ներքին և կամ հոգեկան, բայց արտաքինն ըստ ամենայնի Օսմանեան լինի. ի՞նչ կասենք, եթէ երբէք այս-պիսի մի խաթթի Հիւմայուն դուրս գայ, միթէ Ռուսիա՞, Ֆրանսիա, Անգլիա դանդատուելու իրաւունք կունենան Բարձրագոյն դռնէն։ Մենք Հայքս կարո՞ղ ենք տրտնջալ։ Հոռոմները ի՞նչ կասեն, Հրէայք կընդունի՞ն։ Մենք կար-ծենք, որ բնաւ ամենեւին հաւանութիւն չեն տալ։ Ուստի մենք էլ այս տեղ համարձակ և համեղուելով կասենք որ մեզ՝ Հայոց համար, ամեն տեղ ուր որ ենք, շատ աւելի լաւ է ունենալ բարոյական և ազգային ազատութիւն և իրաւունք, քան թէ լոկ քաղաքային իրաւունք, ինչպէս Ռուսիա, ա-ռանց բարոյական և ազգային արտօնութեանց։ Վասն զի այդ խղճի կամ կրօնի ազատութիւնը թէ Ռուսիա և թէ Թուրքիա, առանց բարոյական և ազգային ազատութիւն և իրաւունք վայելելու ամենեւին նշանակութիւն չունի մի հպա-տակ ազգի համար, դա՝ ձեռն ու ոտը կապած անկարող ստրու-կի կը նմանի, կամ թէ աչքերը կապած ձիուն կամ իշուն, որ իրան համար կենդանի է բայց բանը դործը հորին մեքենան դարձնելով, ուրիշի համար ջուր քաշել է. հէնց այսպէս է մեր կրօնի ազատութիւնն էլ Ռուսիայում։

Արդ հասկացումէ, որ կրօնի կամ խղճի ազատութիւնն Եւրոպիում մեծաւոր կամ հոգեւոր համեղումի կամ կարծիքի վրայ է ամփոփուած, առանց նրան ազգայնութեան դրոշմ, քաղաքական հանդամանք և ներդործութիւն, երկրային բնի-

կութիւն և ընկերական կեանքի կերպարանք տալու։ Այս կը նշանակէ, որ կրօններն Եւրոպիում իրանց ազգային, քաղաքական, երկրային և ընկերական կողմերը չունին հետեւաբար և իրանց ներգործութիւնը դադարած է, ազգային, քաղաքական, երկրային և ընկերական կեանքի վրայ, վասն զի այդ այլեւայլ և կարեւոր ներգործութիւնքն կառավարութիւնքն են իրանց ձեռին առած և իրանք են եղած մարդկային ընկերականութեան այդ այլեւայլ հանգամանքները սնուցանողներն ու պահպանողները։ Բայց Ասիայում կամ Արեւելքում այդպէս չէ եղած, կրօնները շատ պաշտօն ունեցել են և ունին կատարելու ժողովրդների վրայ։ Կրօններն են եղել ժողովրդներին ազգային դրոշմ, ընկերական հոգի և քաղաքական կեանք տուողները։ Կը մնայ այստեղ բացատրել թէ ի՞նչ է ազգային դրոշմ, ընկերական հոգի և քաղաքական կեանք ընթերցողին հեշտութեամբ ըմբռնել տալու համար այս խնդիրը. բայց որովհետեւ շատ ձիք կը լինէր նը-բանց մասին մանրամասն խօսել այս տեղ, նրա համար կարճ կը կանդնենք։ Մի միայն մեր Հայոց վերաբերածին վրայ կը գարձընենք մեր հայեցուածքն և յետոյ այդ կէտէն կը նկատենք Ցանձնաժողովոյ Տեղեկագիրն, որն որ ինչպէս Ռուսաց կառավարութեան՝ այնպէս էլ մի քանի մի միայն Եւրոպական հայեցուածք ունեցող մարդկանց նոր օրինակ բան է երեւած։

Ազգ բառն իր առանձին հին և նոր պատմութիւնն ունի և իր նշանակութիւնը շատ կը տարբերի, ցեղ, աշ, գոհմ, բառերէն պատմութեան դիտութեան մէջ։ Մեր նախնեաց դրքերի մէջ՝ Ազգ բառն երբեմն Հայոց աշխարհի ամբողջ բնակիչները նշանակելու համար է գործածուած, երբեմն նոյն աշխարհի մէջ գտնուած այլ և այլ ցեղերը կամ տոհմերը, բայց մեր նախնիք այդ բառի, ինչպէս նաեւ շատ բաների գործածութեան մասին, հետեւողութիւն են արած Սուրբ Գրքի։ Այսօր ազգ այն բաղմութեան մարդկանց ենք ասում, որոնց մէջ այլեւայլ ցեղեր կամ տոհմեր կան այլեւայլ երկիրներէ եկած կամ նոյն այն երկրէն ծնած, որոնք նախ իրանց հայրենի երկիրն ունին, իրանց բարբառն ունին թէ կենդանի և թէ գրաւոր, իրանց կրօնն ունին իր ազգային, երկրային և

քաղաքային կերպարանքով և ամենէն մեծը մի կառավարութիւն, նոյնպէս ազգային և ժողովրդային ինչպէս տահմանադրական կառավարութիւնք և կրօնական ու տոհմային, ինչպէս Ռուսիա, Թուրքիա եւայլն։ Այսօր ազգայնութիւնը փոփոխուում է բայց ցեղականութիւնն ոչ։ Մի կառավարութիւն որ իրան է սեպհականել ազգայնութեան դրոշմադրութիւնը կարող է որ եւ է ցեղի կամ տոհմի իր ազգայնութիւնը դրոշմել, յառաջ այդ պաշտօնը կրօններն էին կատարում, այսօր կառավարութիւնքն են անում, քրիստոնէից մէջ այս կրօններն են Դաթոլիքութիւն կամ պապականութիւն, Օրթոտոքսութիւն կամ թէ հնումը Բիւզանդիոնականութիւն, այսօր Ռուսականութիւն։ Զասենք, որ Հայոց կրօնն այդ հանդամանքը չէ ունեցել, ունեցել է, միայն իրան օգնութեան չէ հասել Հայոց քաղաքական կառավարութիւնը, այսինքն Հայոց մարմնաւոր կառավարութիւն երբէք չէ իմացել հոգեւոր կառավարութեամբ ցեղերի և երկրների վրայ տիրել, ինչպէս այդ եղել է Օրթոտոքս և Դաթոլիք ասուած կառավարութեանց ձեռին, բայց Հայոց կրօնը մի առաւելութիւն է ունեցել, այն է, այնպիսի ժողովրդների ազգայնութեան դրոշմն է տուել, որ ամենեւին չեն ունեցել այդ և ոչ մէկէն էլ առած են եղել, բայց միայն իրանց ըկ երկրայինը, ինչպէս են Աղուանք, Կորդուայք, Սասունք Մոկք եւայլն։ Ուստի պէտք է ազգայնութիւնը ցեղականութենէն որոշել, հին ժամանակումն ազգայնութիւնը կրօնն էր դրոշմողը ժողովրդներին, ինչպէս Մովսիական կրօնը, Բիւզանդիոնի քրիստոնէութիւնը, ինչպէս նաեւ պապականութիւնը։ Այսօր կառավարութիւնքն են կատարում այդ պաշտօնը։ Որո՞ւ է անկ, ո՞ր յակն է լաւ, ո՞րն է օրինաւոր, այդ կը մնայ ընթերցողին դատել, միայն թէ ընթերցողն իրան, և իր կանգնած տեղը ճանաչէ որ արեւելքումն է և Հայու ցեղէն է։

Այսօր Բողոքական ասուած քրիստոնեայք իրանց ազգային կողմն չունին, նրա համար ամեն ազգի և կառավարութեան մէջ հեշտ մուտ գտան, որովհետեւ ամեն կառավարութեան հետ յարմարուեցան և ամեն ազգի կեանքի մէջ ներգործեցին ուստի և պատճառ դարան խղճի ազատութեան իրաւունքը ձեռք բերել ամեն տեղ ուր որ մտան։ Ռուսիա,

յում Բողոքականութիւնն այնքան աղատ է որչափ Պապականութիւնը ճնշուած է, ինչու համար, վասն զի Պապականութիւն կամ Բաթոլիկութիւնն ասենք Ռուսականութեան հակառակ մի աղգային կրօն է հաստատում իր սեպհական լեզուովը, արարողութեամբը, ծեսերովը, եկեղեցու ձեւերովը և ամենէն գլխաւորը իր նուիրապետութեամբը։ Նմանապէս Հայաստանեայց եկեղեցւոյն աղգային կողմերը շատ զգալի են։ Ուրեմն յայանի բան է խղճի աղատութեան օրէնքը չափաւորուած կը լինի այդպիսի կրօնների համար, այսինքն կառավարութիւնն այդ կրօնների աղգային կողմերը միշտ կամ կոտրատելու կաշխատի, որպէս զի մի մրցայն համոզումի վրայ կայանայ, որն որ ընչելը մի դժուար բան չէ եթէ այդ համոզումն իրան համար սնունդ չունենայ դաստիարակութիւնը և նոյն կրօնի վարդապետութիւնը, կամ թէ իրանին ամեն կողմանէ նմանեցունել և խառնել կը չանայ, այնպէս որ այն կրօնի հետեւողները այլեւայլութիւն չտեսնելով երկու կրօնների մէջ խորութիւն չանեն և կառավարութեան կրօնը նախապատիւ համարեն։ Բայց Ֆրանսիայում և Անգլիայում և ուրիշ երկիրները Եւրոպիոյ մէջ այնպէս չեն, պիտի ասեն մեզ։

Բայց այդ երկիրներումը կրօնի աղատութեան հետ կայ նաև բանականութեան աղատութիւն, եթէ այդ երկիրների մարդկանց բանականութեան դուռը չբացուիլ, անհնար է, որ և է կրօն այդ մարդկանց հոգւոյն և մտքին մէջ մուտ ունենայ, թէ գուցէ կառավարութիւնք, թէ գուցէ բիւրաւոր մարդիկ ամեն միջոց ի գործ դնեն այդ բանին համար, անհնարին է։ Ինչ կուզեն թող ասեն մեզ։ Այսօր մարդկային բանականութիւնն Եւրոպիոյ մէջ կրօնի ձեռնէն շատ բան է յափշտակած և տուած կառավարութեանց և ժողովրդների ձեռին, նոյն իսկ Գաթոլիքականութենէն, որն որ այսօր ինչպէս սաստիկ տարբերումմէ անցկացած դարերու Բաթոլիկութենէն, այնպէս էլ ամեն երկրների և ժողովրդների մէջ էլ է տարբերում։ Սպանիոյ Դաթոլիկութիւնը Ֆրանսիոյ Բաթոլիկութեան չնմանիլ, նոյնպէս և Ֆրանսիայունը Իտալիան, և Իտալիայունը Գերմանիոյ, Թուրքիոյ և Ռուսիոյ։ Այս կը նշանակէ որ Պապականութեան կրօնն էլ, կառավարութեանց պէս աղգերի, երկիրների, կլիմաների և կառավարութեանց պահանջածնե-

րին գլուխ է ծռում մուտ գտնելու համար ամեն տեղ։ Մի օրինակ այս մեր ասածը հաստատելու համար։ Պապականութիւնն երբ առաջին ժամանակներն երեւան եկաւ մեր կողմերը, ամեն ազգերի, մանաւանդ մեր ազգին դժոխքէ աղատութիւն և արքայութեան մուտ էր խոստանում։ Հոգի փրկելու համար Պապական լինելու մտքութիւնը բաւական տեւեց, յետոյ երբ այդ կանգ առաւ, լուսաւորութիւն, ասացին Հայոց համար, մի միայն Պապականութեան մէջ կայ, դիտութիւն և կրթութիւն միայն Պապական լինելով կարելի է ստանայ Հայոց ազգը։ Այս վարդապետութիւնն երկու դար շարունակ Պապական Հայերը մեր ազգին ականջին մէջ հալեցուցին իրանց ամեն տեսակ գրքերովը։ Այսօր մի նոր հնարք են գտել, քաղաքական փրկութիւն են խոստանում, այս իրանց գրքերումը չեն վարդապետում, այլ գործով և խօսքով են քարոզում, քաղաքական փրկութիւն ասում են Հայոց համար Պապական լինելու վրայ է, միանգամ, ասում են այդ բարոյական յառաջադիմութիւնն անեն, իբրեւ հետեւանք քաղաքական փրկութիւն կունենան։ Եւ այս բանիս համար ինչեր է լինում Թուրքիայում ամեն մարդու յայտնի է, բայց մենք կասենք որ այդ որոտումն էլ կանց կենայ, ինչպէս առաջուայ վարդապետութիւնքն անցկացան։

Այսքան խօսելով, կամեցանք ջանք անել մեր հայեցուածքը յառաջ բերելու կառավարութեանց թոյլտուութիւնը կրօնների աղատութեանց վայելելու իրաւունքների մասին, և կրօնների ազգային, քաղաքական և ընկերական կողմերի համար։ Ուստի խնդանք, որ Պրոտէստանտ քրիստոնէից կրօնն իր ազգային և քաղաքական կողմը չունի, և այն է խղճի աղատութեան ծառը տնկողը եւրոպական կառավարութեանց և ազգերի մէջ։ Գաթոլիկութիւնը, բացի Սպանիայէն, ուր տեղ ժողովրդին վրայ սաստիկ դրոշմուել և նրան ազգային, քաղաքական և ընկերական կերպարանքն է որոշել, ամեն տեղ չափաւորուել է և ձեռը վեր է առել ժողովրդի կեանքի մէջ ազգային, քաղաքական և ընկերական ներգործութիւն անելուց և այդ պայմանով այդ տեղերն աղատութիւն է գտել։ Իսկ Ռուսիայում բոլորովին պատերազմի մէջ է Օրթոտոքս կրօնի հետ։ Այսպէս էլ պէտք է հասկա-

նալ Հրէութեան, Մահմէտականութեան և ուրիշ նրանց նման կրօնների մասին։ Ամեն մարդ գիտէ, որ Հրէութիւնն իրրեւ համոզում լիովին ազատութիւն կը կրէ Եւրոպիոյ մէջ, բայց իր ազգայնութիւնը չունի, կը նշանակէ շատ բան չունի իրա հետեւող ժողովրդին մէջ։ Այսօր Եւրոպացիք կուզեն մահմէտականութիւնն էլ այդ վիճակին հասցունել, այսինքն նրա ազգային և քաղաքական կողմերը վերանայ և մնայ միայն հոգեւոր կողմը և ներդործէ մարդկանց միայն հոգւոյն վրայ։ Կը նշանակէ, որ այս դարս մարդկանց բանականութեան տիրապետութեան դարն է կառավարութեանց ձեռքով, և ոչ աստուածային օրէնքների։ Նրա համար որ աստուածային օրէնքներն էլ կառավարութեանց շահուն և օգտին գործիք են եղել. կը նշանակէ որ կրօններն այսօր եւրոպական հայեցուածքով ժողովրդների կեանքի վրայ կառավարութեանց ուղածին պէս ներդործութիւն պէտք է ունենան։ Օրինակի համար Ամերիկայում, կրօնը մի միայն քարոզելով կամ համոզելով ունի իրաւունք ներդործելու, Պրանսիայում, ոչ միայն քարոզելով, այլ քաղաքական օրէնքներ հաստատելով, աղդային սովորութիւնները նուիրական անելով, թափորներ դարձնելով, եկեղեցիներում փառաւոր և լուսաւոր տեսարաններ ցոյց տալով, ուսումնարաններին և համալսարաններին իրանց ուղածին պէս ուղղութիւն տալով և այլն։ Ֆրանսիայում նմանապէս քարոզելով, բայց միանդամայն որբ տղոց սնունդ և կրթութիւն տալով, հիւանդների և քաղցածներին օգնութիւն հասնելով, անհամար հոգեւոր դրքեր և պատկերներ տարածելով, տեղ տեղ արարողութեանց և ծէսերի մեծ նշանակութիւն տալով, տեղ տեղ էլ կրթութեան և դիտութեան՝ նրանք կրօնի օգտին համար գործածելով, այսպէս էլ իմացիր Անգլիայում և Գերմանիայում քիչ շատ այլեւայլութեամբ, իսկ Ռուսիայում, սրա հակառակն, կրօնը բոլորովին կառավարութեան ձեռին է, նա ինչպէս որ կը կամենայ իր օգտին և շահուն համար կը գործածէ, ժողովուրդը մի միայն հնազանդելու է պարտական։ Մի ամենամեծ ապացոյց, ինչպէս Գամբոլիքութիւնը շատ ուշ զարթեցաւ և կարելի է ասել երբէք չզարթեցաւ սարկութիւնը Եւրոպիոյ մէջն չնչելու, այնպէս էլ Ռուսիայումը երբէք կրօնը չմոռածեց

մարդկային ստրկութիւնը վերացնելու։ Եթէ ստրուկների ազատութիւնն ի գործ դրուեցաւ Եւրոպիում և ի գործ դրուելու վրայ է Ռուսիայում, այդ բանական փիլիսոփայութեան հետեւանքն է, որ՝ որ ժողովուրդն իր կառավարութեան դանկումը դրաւ իր արիւնի գնով։

Ինչ ենք կամենում ասել այսքան խօսելով, այն ենք կամենում ասել, որ Ցեղեկագրի հեղինակները այսինքն Կաթողիկոսական Յանձնաժողովը կամ թէ Թուրքիոյ Հայոց Կ. Պոլսոյ Ազգ. Ընդ. Երեսփոխանական ժողովը, այսպիսի մի պարագայի մէջ, որ մի մեծ գործ պիտի ունենար Եւրոպական տերութեանց հետ, պարտական էր յառաջ յառաջ մէջ տեղ դնել թէ ի՞նչ է Հայաստանեայց Եկեղեցին, ո՞րն է նրա պատմութիւնը, ի՞նչ է եղել նրա պաշտօնը աշխարհիս մէջ և ի՞նչ է լինելու այսուհետեւ։ Այն ազգերի վրայ ինչ ներգործութիւն է ունեցել, որոնց մէջ հաստատուել է։ Ինչպէս կը տարբերի Յունական, Պապական կամ Օրթոտոքս և Բաթոլիկ Եկեղեցիներէն։ Ի՞նչ նշանակութիւն ունի Հայաստանեայց Եկեղեցին, Հայաստանցւոց համար և որո՞նք են, ի՞նչ յանկի են ո՞ր միջոցներովն են եղել ու են իր ներգործութիւնքն իր հաւատացելոց վրայ։ Երբ այս հարցումները մէջ տեղ կը դրուէին, այն ժամանակ կը հասկացուէր նաեւ իր վիճակը, իրմէ պակասածն, իր առաքելութեան որպիսութիւնը, իր վայելած աղատութեան իրաւունքները, և թէ հաղա՞ծ ենք է կրում, եթէ ո՞չ խաղաղութիւն է վայելում թէ իր պաշտօնն ամեն մասնով կատարո՞ւմէ այն ժողովրդին, որուն փրկութիւն կը խոստանայ, եթէ ո՞չ, ոչ հոգեկան սնունդ է մատակարարում, ոչ մըտաւոր կեանք է տալի, ոչ ազգային դրոշն անջնջելի պահում, ոչ ընկերական կապն պնդացնում և ոչ էլ մարմնաւոր ապահովութիւն ճարելու հոգ տանում։ Եթէ Թուրքիոյ Հայոց Երեսփոխանական ժողովը այս պարտքն իր վիզն առնէր մի անգամ և եթ անվեհերութեամբ և աղատութեամբ և ճանաչել ցանկանար Հայաստանեայց Եկեղեցւոյն թէ նախնի և թէ արդի դրութիւնը (նախնին ճանաչուի կասենք, որպէս զի արդինն իմացուի) որու այսօրուայ իր դոյութիւնը պարտական է, և թէ նա ի՞նչ ներգործութիւնք ունէր ժողովրդին վրայ և այսօր այդ ներգործութիւնքը կը պակսին իրմէն

ու ի՞նչ աղատութիւն և արտօնութիւն պահանջելու իրաւունք ունի իր բանեցնելու ներդործութիւնքը ձեռք բերելու համար, այն ժամանակ կը ճանաչէինք և մենք մեզուսեղ ու մեր թշնամիքը, այն ժամանակ կը ճանաչէինք և մեզ, ասում ենք, և մեր վրայ տիրող կառավարութիւնքը և մեզ հալածող Օրթոտոքս ու Գաթոլիք կրօնները, որոնց մեր եպիսկոպոսներն ու պատրիարքներն չենք իմանում ինչու համար ներողամիտ են լինում։ Թէ որ այս մեր ասածին պէս մի սկզբունք տրուէր այդ հարցումներին, այն ժամանակ կիմանայինք, որ Ռուսաց կառավարութիւնը մեր Եկեղեցու մի միայն արարողական կողմին ներդործութեանն է թոյլտուութիւն անում և ոչ թէ նրա աղդային դրոշմին, և այն էլ այն պայմանով, որ այդ արարողութեանց կամ ծէսերի վրայ մի ցունական կամ Օրթոտոքսութեան քող ծածկուի։ Քահանայք Ռուսաց քահանայներէ չտարբերուին հագուստով, պսակը, մկրտութիւնը, թաղումը մի միայն լեզուով տարբերուի, իսկ լեզուն էլ ժողովրդի համար, աղդային և հրապարակական դաստիարակութիւնն արդիլելով միայն քահանայների համար կարդալու լինի և ոչ հասկանալու, իսկ հոգեւոր ներդործութիւնը փոփոխուի հոգեւոր սպասաւորութեան, այն է, երեխայք մկրտել, ննջեցեալքը թաղել, եկեղեցումն էլ հանդէսներ կատարել ի պատիւ կայսեր, իսկ ուխտադնացութեան պաշտօնը ամենայն աղատութեամբ կատարել և այլ սրանց նման բաներ, որոնք եթէ ձիդ չլինէին մի առ մի յառաջ կբերէինք։ Այս է Ռուսիայում Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտօնն ու ներդործութիւնն իր ժողովրդին վրայ, Թուրքիոյ մէջ ինչպէս լինելը ամէքին յայտնի է, ուստի և աւելորդ կը համարինք այս տեղ յառաջ բերել։

Այս յանկի մի յայտարարութիւն երեսփոխանական ժողովը մի ցանձնաժողովոյ ձեռքով անելուց յետոյ, Հայաստանեայց եկեղեցւոյ Ռուսիայում ի՞նչ վիճակի մէջ լինելուն էլ մի տեղեկագիր կարող էր դուրս բերել այդ Սինոդական և կանոնիստական հոգեւոր առեանեներէն։ Յետոյ այդ փալաժէնիայի ներդործութեանց արդիւնքը վնասել ժողովրդի բարոյական կեանքի մէջ. այդ բանը մի միայն Հայաստանեայց Եկեղեցւոյն ճանաչողը, այդ երկիրներումը մանդալով, կարող

էր անել և ոչ ուրիշ մարդ և ուրիշ կերպով։ Հետեւաբար Հայաստանեայց եկեղեցու վրայ տրուած տեղեկութիւնքը երբ կերպ հայեցուած քով պիտի լինէր։ Առաջին՝ բաղդատելով նոյն Եկեղեցու նախնի սահմանադրութիւնը, Ռուսաց տէրութեան 1836 թուին տուած փալաժէնիայով։ Երկրորդ՝ նոյն այդ փալաժէնիայով կառավարուած Հայոց եկեղեցու այսօրուայ վիճակը, Թուրքիոյ Հայոց Եկեղեցւոյ այժմեան դրութեան հետ։ Երրորդ՝ ի՞նչ դրութեան մէջ պէտք էր դնուէր մի քրիստոնեայ կառավարութեան տակ, երբայդ կառավարութիւնն էլ ինքն իրան բարեկամ Հայոց է ցոյց տուող։

Այս թերութիւնքն ունենալով ցանձնաժողովոյ ցեղեկագիրն իր սկզբունքին մէջ, ոչ մի կերպով, իբրեւ Հայոց Եկեղեցու այսօրուայ դրութիւնը մեր աչքի առջեւ հանող մի պատկեր չհամարուիր։ Այլ մի համառօտութիւն նկատողութեանց փալաժէնիայի վրայ և ոչ նրա ներգործութեանց մասին։ Վեր ի վերոյ բաղդատութիւն, փալաժէնիայի տրամադրութեան՝ Հայաստանեայց Եկեղեցու հաւատալիքին և իշխանութեան հետ և ոչ թէ նոյն տրամադրութեան անելու ներգործութեանց պատկերը նոյն Եկեղեցու հաւատացելոց վրայ։ Այո՛, Հայաստանեայց Եկեղեցին, շատ հանգամանքների մէջ, պէտք է ներգործէր իր հաւատացեալ ժողովրդին վրայ, ինչպէս հոգեւոր կողմանէ, նոյնպէս և աղգային և ընկերական կողմանէ և երբեմն էլ մարմնաւոր կողմէն անգամ։ Այդ ներգործութեանց ամենքն էլ դադարած են այսօր, Ամենայն Հայոց կաթողիկոսութեան համար, նոյնպէս Հայոց եկեղեցականաց համար և այդ դադարեցումն եղած է երկու կողմէն։ Փալաժէնիայի ուղղութիւնն այն է, որ ի՞նչ բանն որ աղգային և ընկերական կերպարանք ունի՝ խափանել ու ջընջել տալ, իսկ ի՞նչ բան որ կայսերական կառավարութեան շահուն է, յառաջ քշել։ Իսկ ժողովրդի կողմէն եղածն է ինչ բան որ՝ իր աղգային և ընկերական կեանքին հակառակ է դալի, բոլորովին մերժել կամ նշանակութիւն չտալ։ Այս նեղ ճանապարհումն է դանուում ամենայն Հայոց կաթողիկոսի իշխանութիւնը և իրան հետ բոլոր հոգեւորականաց դասուն Ռուսիայում։ Ռուսահայք ատելով ատում են իրանց եկեղեցականներին, եկեղեցականքն էլ իրանց կողմէն արհամարհե-

լով են արհամարում. երկուսն էլ չեն իմանում այդ բանիբուն պատճառն, ըստ մեզ փալաժէնիայի հետեւանքն է կամ թէ Ռուսաց կառավարութեան Հայոց եկեղեցականների նշանակութեան փոխելն է Հայոց ժողովրդին մէջ և նմանեցնելն իր եկեղեցականներին։ Թէ ի՞նչ վատ հետեւանք է յառաջ գալի այդ բանէն, էլ թող Աստուած գիտենայ, վասն զի Թուրքիոյ Հայք չեն կամենում իմանալ։

Յանձնաժողովոյ Տեղեկագիրը, այդ մասին, ոչ դարման է ցոյց տուել և ոչ ճանապարհ մի դարման գտնելու։ Բայց այդ մեղքն իրանը չէ՝ պէտք է ասեն մեզ, այլ, Ազգ. Երեսփոխանական ժողովոյն, որ իրան այնպէս հրահանգ տուաւ և ոչ ուրիշ կերպ։ Երեսփոխանական ժողովը, խնդիրը չիմացած չճանաչեցած ու լաւ չգիտեցած, ոչ ինչ որոշ և վճռողական հրահանգ չէ կարող տալ որ և է առարկայի, ուստի Յանձնաժողովոյն տուած հրահանգը կամ մի բան դիտենալով է այդ խնդրի մասին, և կամ թէ մի բան դիտենալու համար է։ Այդ բանն որոշ չէ իր տուած հրահանգին մէջ։ Եթէ լաւ էր իմանում խնդիրը, հարկաւ և նրա պայմանն էլ պէտք էր մտածէր, իսկ եթէ Յանձնաժողովոյ Տեղեկագրէն յետոյ իմացաւ, հիմա պէտք է մտածէ դրա դարմանը։ Ինչ իրաւունքով որ հետամուտ էր լինում փալաժէնիայի վրայ գիտութիւն ունենալու, նոյն իրաւունքով կարող է նաեւ իր ազգին ու եկեղեցու վնաս բերող բանը վերացնելու։ Ահա՛ ինչպէս, Ամենայն Հայոց Կաթողիկոսն, թէ որ մի մեծ նշանակութիւն ունի, Ռուսիայում և ամեն Հայոց համար Արեւելքում։ Այն է որ, Երուսաղեմի և Պոլսոյ Պատրիարքներն, Սսոյ և Աղթամարայ Կաթողիկոսներն, նրա հոգեւոր ծայրագոյն իշխանութիւնը կը ճանաչեն, թէ հաւատալիքի թէ իշխանութեան և թէ ազգային ներգործութեան մասին։ Մեր Հայոց դրութեամբ, Թուրքիոյ այդ երեք հոգեւոր իշխանութեան, բայի հաւատալեաց մասնէն, ազգային ընկերական, տնտեսական և այլ հանգամանքների մասին բանեցնելու ներգործութիւնը, ունենալու և վարելու իրաւունքն ամփոփուած են կ. Պոլսոյ Հայոց Ազգ. Ընդ. Երեսփոխանական ժողովոյն մէջ։ Այս բանս ոչ թէ Սահմանադրութեան զօրութեամբ, այլ ի բնէ Հայք լրանց հետ միասին են բերած Հայաստանէն։ Աշխարհական

եկեղեցական մի մարմին են Հայոց մէջ, ահա՛ ուր է այս մեր դրութեան սկզբունքն, ուստի ամենայն Հայոց Կաթողիկոսն ոչ ինչ իրմէն և Ռուսաց Սինոդով կամ մի միայն Ռուսահայոցմով մի ամենափոքր հեղինակութիւն կարող է անել, ինչպէս Հայաստանեայց եկեղեցու հաւատալիքին մէջ, այնպէս էլ նրա իշխանութեան, սահմանադրութեան, արարողութեան, նախնական և ազգային կերպարանքին և այլեւայլ արտօնութեանց և աղատութեանց մասին թէ արտաքին և օտար կառավարութեանց նկատմամբ, և թէ իր հաւատացելոց նկատմամբ (այսինքն Հայոց ազգի)։

Արդ եթէ Կ. Պոլսոյ Երեսփոխանական ժողովն այս իր իրաւունքը չի ճանաչել իր եկեղեցւոյն և նրա հոգեւոր տիրոջը վրայ, կը նշանակէ, Թուրքիոյ Հայքն իրանց բարոյական և ազգային կեանքովն յանձնել Ռուսաց կառավարութեան ձեռին։ Այս բանն է և Ռուսաց կառավարութեան սատիկ ցանկացածն ու այդ բանի համար է և Պոլսոյ Հայոց հետ այնպիսի նուրբ քաղաքականութեամբ վարուիլն և նրանց արդէն իր դրպանումը դրած իր մատներովը խաղալը նրանց հետ։ Եթէ ամենայն Հայոց Կաթողիկոսները, ինչպէս Ներսէսն Եւայլք, ասել են Ռուսաց կառավարութեան, թէ իրանք առանց Երուսաղեմի և Պոլսոյ Պատրիարքի, Սսոյ և Աղթամարայ Կաթողիկոսների չեն կարող ոչ ինչ բանի մէջ շարժել երբ կը նայի այդ բանը եկեղեցու հոգեւոր իշխանութեան, վարդապետութեան, սահմանադրութեան, կանոնադրութեան և արարողութեան, կը նշանակէ որ Կաթողիկոսներն էլ յարգում են և ճանաչում արքեպիսկոպոսների ձայնն ու իրաւունքն եպիսկոպոսապետութեան վրայ։

Պիտի շարունակուի։

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՆԱԽՆԵԱՑ

ՀԱՏԸՆՏԻՐ ՔԱՂՈՒԱԾՔ

Ա-եպարանների, Գոբյոց, Ենոնեայ, Տոմբիլոյ, Յոպլոյ, երեք Մակաբիսյեցոյ և Իմաստասիրական գրքերին։

Ա. Մ. Վ. Գ.

ՀԱՏՈՐ Ա.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Սուրբ Գիրքը Եբրայեցւոց ազգէն յետոյ, թէ որ նախնի ազգերէն մի ազգ կայ, որու կրօնական, քաղաքային և ընկերական կեանքի մէջ մի մեծ և ներգործուն պաշտօն կատարած լինի, այն ազգն է Հայոց ազգը։ Իրաւ է, որ Սուրբ Գիրքն ամէն հին և նոր ազգերի այլեւայլ կեանքերի վրայ ներգործել է, ոմանց կառավարութեան և օրէնսդրութեան, ոմանց կրօնական և քաղաքական իշխանութեան, ոմանց էլ գրեթէ ազգային և հոգեւոր գոյութեան հիմունքն է եղել։ Բայց իր ամենէն մեծ ու փառաւոր ներգործութիւնն է ազգերի գրականութեան վրայ արածը։ Յունաց և Հռովմայեցւոց Հոմերներն ու Վիրգիլները, Տիմոթէներն ու Կիկերոններն Իտալացւոց, Ֆրանսիացւոց գրականութեանց կեանք և դրոշմ են տուած, բայց Սուրբ Գիրքն էլ Գերմանիացւոց և Անգլիացւոց գրականութեանց այս վերջին դարերում այնպիսի մի ցունց տուաւ, որ կարելի է ասել մեռելութենէն դէպի կենդանութիւն ածեց։ Որքան երեւելի և արդիւնատու եղած են Ֆրանսիացւոց մէջ Բլուտարքի, Տուկիտի, Հոմերի, Տակիտի և այլ Յոյն և Լատին երեւելի վիպասանների, պատմաբանների և ճարտարախօսների թարգմանութիւնքը, ինչպէս նաեւ Դանտէներ, Բէտրարքներ և Թասօներ են յառաջ բերած Իտալիայում, այնքան էլ և կարելի է ասել աւելի Գերմանացւոց և Անգլիացւոց գրականութեանց համար եղած է։ Սուրբ Գրքի թարգմանութիւնը Գերմանացւոց և Անգլիացւոց մէջ այն ժամանա-

կին՝ երբ իրանց բարբառները կանոնաւորուելու վրայ էին, նրանց գրականութեանց ասպարիզի մէջ մտնելու մեծ պատճառն եղաւ։ Դրա վրայ երկու դար չտեւեց Գերմանական և Անգլիական գրականութիւնքը գերազանցեցին Եւրոպիում քան զամենը, մինչդեռ յառաջ, նախ՝ Իտալացւոցը, յետոյ Ֆրանսիացւոցն Անգլիականին և Գերմանականին վրայ անհամեմատ բարձր էին։ Միլտոն Անգլիացւոց մէջ, Քլոպստոք Գերմանացւոց, Սուրբ Դրքին՝ իրանց գրականութեան վրայ արած ներգործութեան, ամենի աչքին երեւալու համար, անկործան կոթողներ են։

Մի այսքան էլ կարելի է ասել Սուրբ Գրքի մասին, մեր նախնեաց Սրբազան գրականութեան վրայ արած ներգործութեան համար։ Սուրբ Գիրքը մեր նախնեաց սրբազան ու գրաւոր լեզուին ամեն բան էր, բացի թարգմանութեանցմէ, որչափ գրուածքներ որ ունին մեր նախնիք, թէ պատմութիւն, թէ տարեգրութիւն, թէ քարոզագրութիւն թէ սրբազան բանաստեղծութիւն և թէ ուրիշ այլեւայլ գրութիւնք ամենքն էլ գրոշմուած ունին իրանց մէջ Սուրբ Գրքի ուսմունքը, ոչ թէ միայն նրա հոգին, վարդապետութիւնը իրանց են սեպհականել, այլ նաեւ նրա ոճը, լեզուն և ասելու ու գրելու կերպը, այնպէս, որ կարող ենք հենց մատով ցոյց տալ, թէ Եղնիկ Կողբացին Սողոմոնի հետեւողն է, Եղիշէն Մակաբայեցւոց եւայլն. և կարելի է, որ և իրանք են եղած և դրանց թարգմանողները, բայց թարգմանչութիւնն էլ հետեւողութիւն անել կընչանակէ։ Սուրբ Գրքի ներգործութիւնը մի փոքր այլայլումէ, մեր նախնեաց Սրբազան լեզուին կամ գրականութեան վրայ, երբ ինն երորդ և տասներորդ դարերումը Արաբացւոց գրականութիւնն Արաբացի յաղթողների հետ մեր նախնեաց ազգային և ընկերական կեանքի վրայ սկսում է ազդեցութիւն ունենալ. այդ ազդեցութիւնը զգալի է մեր սրբազան գրականութեան մէջ բանաստեղծութեան վրայ։ Շարականներն ըստ մեծի մասին պարսկական և արաբական ներգործութիւն կը կրեն իրանց վրայ և ոչ եբրայական։ Երեքտասաններորդ դարէն կսկսի մեր նախնեաց սրբազան գրականութիւնն օտար ազգերի ներգործութիւնքը զգալի կերպով կրել իր վրայ, մենք կար-

ծենք, որ կամ դուրս հանուելով կամ անդործական լինելով մեր եպիսկոպոսական և նախարարական կեանքի մէջէն, մեր սրբազան լեզուն իր խօսողների և գրողների հետ վանքերումը բանտարկուած լինի, այնպէս, որ իր կենդանութիւնը միայն եկեղեցիներումն ու վանքերումը վայելած լինի և ամեն նրբութիւն, բնականութիւն և ներդաշնակութիւն կորուսած լինի խօսողների և գրողների մէջ։ Այդ ժամանակէն մինչև այսօր մեր սրբազան լեզուն բոլորովին խառնափնդորուած է, միանգամ որ, դադարել է, կենդանի և խօսուն լեզուն լինելուց, մեր հայրենի աշխարհի թագաւորների, կաթողիկոսների, եպիսկոպոսների համար իր կենդանութիւնը ու բնականութիւնը և դաշնակաւորութիւնը բոլորովին կորսուել է։ Գիւղացին և քաղաքացին յաջորդելով նախարարներին և եպիսկոպոսներին, իրանց աշխարհային լեզուն էլ միասին յաջորդել է մեր սրբազան լեզուին։ Մի խօսքով, երբ մեր նախնեաց ընկերական կեանքն իր աղգային, կրօնական, քաղաքային կառավարութեամբը, օրէնսդրութեամբը և բարքովն ու վարքովը անհերեւան է եղել մեր աշխարհի մէջէն, իր կենդանի և խօսած լեզուն էլ միասին անհերեւան է եղել, եթէ երբէք այն լեզուով կը խօսէին, այսինքն, Եղնիկայ, Եղիշէի, Խորենացու, Յովհաննու Իմաստասիրի, Յովհաննու պատմաբանի, Շնորհալուոյ, Լաբրոնացու, Թովմաս Արծրունուոյ, Օհան Վանանդեցու և Արսէն Բագրատունուոյ։ Այս բանս մեզ անհնարին կերեւայ և ոչ մի պատմական ապացոյց էլ չկայ հաստատող, որ մեր սրբազան լեզուն այսինքն գրաբար լեզուն Հայոց աշխարհի ընդհանուր ժողովրդին կենդանի խօսուն լեզուն լինի։ Այդ գրաբար անունն էլ որ տուել են անտեղութեամբ մեր սրբազան լեզուին, ուրիշ բան չնշանակել, բայց միայն գրաբար լեզու- այսինքն գրքերի լեզուի պէս գրելու լեզու։ Այս ասելով չենք կամենում ասել թէ մեր նախնեաց սրբազան լեզուն և աշխարհային լեզուն իրարմէ սաստիկ զատուած և բաժանուած լեզուներ լինին, ոչ ամենևին, այլ այս կարծիքը կամ թէ հայեցուածքն ունինք, որ մեր սրբազան լեզուն կատարելութիւնն է Հայոց աշխարհի ժողովրդի աշխարհային լեզուին և թէ աշխարհային լեզուն մեր սրբազան լեզուէն շատ հին է, և մեր հին աշխարհային լեզուն էլ խառնուրդ է Ասորւոց, Պարսից

Երրայեցւոց, Սկիւթացւոց լեզուների իր սկզբնական տարերքն լինելով Հայկայ և Արամայ դարերի լեզուն, որն որ շատ հաւանական է Նոյի խօսած լեզուն լինի և Նոյի խօսած լեզուն էլ դիտնականները կասեն թէ՝ Զենտա Վեստայի կամ թէ Սանսկրիտ լեզուն էր, որու ճիւղերը Պարսից, Հայոց, Յունաց, Լատինացւոց և այլ շատ աշխարհների բնակիչների լեզուին մէջ կը դտնուին։

Այս մեր ասմունքէն կը հետեւի, որ այսօր էլ Մեծ Հայոց բոլոր նահանգներում, ինչպէս Արցախ, Ուտի, Գուգարք, Պայտակարան, Սիւնիք, Արարատ, Վասպուրական, Տայք, Մոգք, Տուրուբերան, Աղձնիք եւայլն խօսուած կենդանի լեզուներն ամենեւին մեր ոստանիկ կամ սրբազան լեզուի աղաղաղ բարբառները չեն. ինչպէս այդ՝ ընդհանուր կարծիք է եղած մեր մէջ, այլ Արարատեան բարբառը, ոստանիկ, սրբազան լեզուն, այսինքն արքունական և եկեղեցական լեզու դառնալով արքունական և եկեղեցական իշխանութեան հետ տարածուել է և այդ դաւառների մէջ, որքան որ կարելի էր այն ժամանակ տարածուել, ուստի այսօրուայ Հայաստանի մէջ խօսուած լեզուն էլ խառնուրդ է ոստանիկ լեզուի և նահանգական բարբառների, որն որ յաղթող ազգերի լեզուին հետ էլ խառնուելով և դաղթականութեամբ տար աշխարհների և ազգերի մէջ բոլորովին այլայլել, կերպարանափոխ է եղել։ Կը մնայ մեզ որոշել և ճանաչել այսօր թէ որն է մեր նախնեաց ասած Ղէրիբեայ և Եղերական բարբառները։ Ոսպանիկ լեզուն դիտենք որ մեր դրաւոր կամ սրբազան լեզուն է, որով դրուած է մեր Սուրբ Գիրքն և որն որ Հայաստանեայց եկեղեցին իր մէջ իրրեւ կենդանի յիշատակարան մինչեւ այսօր մեզ համար պահած է։

Արդ՝ այդ ոստանիկ կամ սրբազան լեզուն, անեղծ և անարատ պահելու համար ըստ մեր հայեցուածքին, մեր այսօրուայ աշխարհային կենդանի լեզուէն բոլորովին բաժանելու է։ Ոստանիկ լեզուն իր սկզբնաւորութիւնը, ուղղութիւնը և կատարելութիւնն ունեցել է և իրան համար ունունդ ունեցել մեր նախնեաց նախարարական կեանքը և սուրբ հարց ղդացմունքը, հանճարը և աշխատանքը և ամենէն գլխաւորը քրիստոնէութեան մեր հայրենի աշխարհին մէջ յառաջ բե-

բած մնաւոր, և հոգեկան յեղափոխութիւնը։ Առանց կեանքի մի լեզու զարգացնել, ծաւալել մի խօսքով կենդանացնել մեզ անհնարին բան կերեւայ, հետեւաբար մեր սրբազան լեզուով խօսելու և գրելու համար այն կեանքը պէտք է մեզ, որ իրան համար երրորդ դարէն մինչեւ երկոտասաներորդ և երեքտասաներորդ դարերն ունեցել է։ Մի զօրաւոր ապացոյցն այս մեր ասածին Եւրոպացւոց արած ջանքն է Լատինացւոց լեզուի վերակենդանութեան համար, վերջն ու վերջն իմացուեցաւ, որ անհնարին բան է բարբարոս կոչուած աղգերի ընկերականութեան համար մի կանոնաւոր տէրութեան կամ աղգի լեզուն նրան սեպհականել. այդ բարբարոս աղգերն իրանք լաւանալով ընկերական կեանքի մէջ իրանց բարբառներն էլ աղնուացուցին, Լատինական լեզուն մնաց այն տեղ ուր որ էր, այսինքն Եկեղեցու և գրքերի մէջ։ Այդպէս էլ պիտի լինի մեր ոստանիկ լեզուն առանց այն ընկերական կեանքի՝ որքան որ աշխատինք, որքան որ այսօրուայ մեր գրաւոր լեզուն նրա հետ խառնենք և նրան մօտեցընենք, այդ բոլոր մեր ջանքերը ուրիշ ոչ ինչ չեն յառաջ բերել, բայց միայն մեր սրբազան լեզուն էլ խանգարել և աշխարհային բարբառներն էլ սպաննել։ Որքան հարկաւոր է մեր նախնականութեան համար ոստանիկ լեզուին սրբազան և կոյս մնալը, այնքան էլ հարկաւոր է այսօրուայ Հայաստանի բարբառները ճանաչելը, իմանալն ու քննելը և մի կերպով նրանք գրականութեան առնելը, վասն զի այդ բարբառների մէջ կը դտնենք նաեւ մեր՝ ոչ թէ այսօրուայ, այլ հին ժամանակուայ պատմութեան աղբիւրները, բարոյականութեան պատկերը, վարքի և բարքի այլայլութիւնքն ու փոփոխութիւնքը, մեր սովորութեանց կերպակերպ լինելն ամեն նահանգների, դաւառների և քաղաքների մէջ, ուր որ դտնուած ենք ժամանակով և դտնուում ենք այսօր։ Մի խօսքով Ամենի լինելուն։ Պոլսոյ, Կարնոյ և Ախլցխու Հայն մի նահանգէ լինելուն, նոյնպէս և Եղուարդու, Ապարանի, Կարբի և Արցախու գիւղերէն լինելն այսօրուայ Իզմիրու, Մանիսայու, Էօտէմիշու Հայը։ Վերջապէս մեր նախնեաց ոստանիկ լեզուն սովորել մեզ համար մեր գլխաւոր պարտքերէն մինն է, վասն զի այդ լեզուով է մեր սրբազան գրականու-

թիւնը, բայց թէ կարող ենք մեր այսօրուայ աշխարհային բարբառներին՝ ոստանիկ լեզուին սճերը, դարձուածքները, քերականական կանոնները և դրականական բառերը տալ ու սեպհական անել նրան, այդ անհնարին բան կերեւայ մեզ, ոչ թէ միայն մի նոր դրաւոր լեզու ունենալու կողմէն՝ այլ Հայոց ազգի մտաւոր զարգացման մի արագ ցունց տալու կողմէն էլ։ Այն սքոլաստիքական դրութեամբ, որ այսօր աշխատուում է մեր ազգային ուսումնարաններում ոստանիկ լեզուն սորվեցնելու համար, ըստ մեզ բոլորովին զուր ջանք է և ապարդիւն. այդ լեզուն լաւ սորվելու և իմանալու համար, ոչ թէ մատենագրելու, պէտք է մեր նախնեաց քաղաքական կրօնական և ընկերական կեանքը խիստ քաջ ճանաչել, այսինքն Հայոց աշխարհի, պատմութեան, դպրութեան, օրէնքին, կրօնին, քաղաքային և ընտանեկան սովորութեանց գիտութիւնն էլ սովորել, այդ բանն էլ կը լինի, երբ կարող կը լինինք բոլոր սրբազան գրականութիւնը քաջ սովորել, այսինքն, որչափ պատմագիր, տարեգիր, վիպասան, ճարտարախօս, բանաստեղծ մատենագրեր ունինք, կարդալ ու կարդալ։ Այս ուսմունքն էլ ի՞նչ բանի համար է մեզ հարկաւոր, Հայ գիտնական և ոստանիկ լեզուն քաջ հասկացող և գիտացող լինելու համար և ոչ թէ մատենագրելու մեր ժամանակուայ Հայոց համար։ Կը նշանակէ որ, այսօր Հայոց համար այդ գիտութիւնը մի սեպհականական ուսմունք պէտք է լինի և ոչ ընդհանրական, վասն զի ընդհանուրին ոստանիկ լեզու սորվեցնել ուզելն այն դրութեամբ, որն որ գործ է ածուում այսօր մեր դպրոցներումն ուրիշ բան չէ, հապա նրան ոչինչ չսորվեցնել։

Այս ցաւալի դրութիւնը յայտնի լինելով անշուշտ ՀԱՏՐՆ-ՏԻՐ ՔԱՂՈՒԱԾՔԻ աշխատասիրող, Մ. Վ. Գ—ին այդ եղանակն է բռնել իբրեւ ամենահեշտ ճանապարհ ոստանիկ լեզուի ուսանողներին։ Սուրբ Գիրքը, ինչպէս ասացինք, մեր ոստանիկ լեզուին մի միայն դասագիրքն է, դրա լեզուի ուսմունքը պատրաստութիւն է և մեր ուրիշ մատենագրութեանց ոճն ու բանը լաւ հասկանալու։ Կը մնար մի ընտրութիւն անել Սուրբ Գրքի մէջէն այլեւայլ քաղուածքների։ Ցարգոյ, Մ. Վ. Գ—ը այդ բանն էլ շատ նուրբ հասկացողութեամբ կատարել է և

ամփոփել մի մատենի մէջ, և մտադիր է, ինչպէս մեզ երեւումէ որ Մարգնապարան Նախնեաց անունով հետզհետէ մեր սրբազան գրականութիւնը գրքուկներով ընծայել ոստանիկ լեզուի ուսանողներին։ Մենք մեր հայեցուածքով այնպէս կը դատենք, որ այդ ճանապարհէն ուրիշ հնարաւոր եղանակ չկայ մեր նախնեաց ոստանիկ լեզուն սորվելու։ Այդ լեզուով մատենագրելն ինչպէս ասացինք, մեզ համար անհնարին բան է, բայց հետեւութիւն, շատ կարելի, այսինքն մեր նախնեաց մատենագրերի ուղղութիւնն օրինակ վերառնել սրբազան լեզուով գրելու համար, այն էլ ոչ ամեն տեսակ գրուածքների համար։ Ինչ որ նոր ազգերի նոր գրականութեանց կը պատկանի, օրինակի համար, նոր կեանքի թատերական, վիպական, արհեստական, գիտական և ուրիշ նոր յանկի գրուածքների համար մեր սրբազան լեզուն մեզ անբաւական կերեւայ պատասխանելու, իսկ նախնեաց կեանքի վերաբերածների համար, նոյնպէս և եկեղեցական գրականութեան՝ ամեն կերպով կարող է հանիլ։

Մեր ընթերցողներին, ՀԱՏԸՆՏԻՐ ՔԱՂՈՒԱՆՔԻ աշխատասիրողին հայեցուածքն ու նպատակը լաւ հասկացնելու համար, յառաջ կը բերենք այս տեղ նրա յառաջաբանը։

«Ազգի մը մտաւոր և բարոյական վիճակն անոր լեզուէն կը ճանչցուի, պատմութենէ կը սորվինք, փորձով ալ հաստատուած է թէ գրեթէ ամեն ազգի լեզուին ոսկեդարը՝ միանգամայն ազգին յառաջադիմութեան ամենէն բարձր կէտն հասած ժամանակն է, և թէ՝ ազգին անկմանը հետ՝ լեզուն ալ կսկսի անկանիլ։ Գրագիտութիւն ունեցող հին լեզուաց տեղեակ եղողներուն վկայութիւնն ասիկա կը հաստատէ։ Այս մասին Յունարէնի և Լատիներէնի ինչպէս նաեւ մեր հին լեզուին համար, տարակոյս չկայ. այս լեզուներուն պատմութիւնը յիշեալ ազգերուն պատմութեանը հետ բաղդատելով՝ կը դտնենք որ ազգային բարոյական նաև քաղաքական զարգացումն ու անկնումը՝ լեզուին նոյն վիճակներուն հետ մի և նոյն քայլով յառաջ գացած են։ Նոր պատմութիւնն ալ արդի լեզուաց համար նոյն վկայութիւնը կուտայ, և այս օրուան օրս կը տեսնենք որ բարոյապէս և քաղաքականօրէն ամենէն

յառաջադէմ ազգաց լեզուներն՝ ամենէն աւելի ծաղկեալներն են։ Եթէ այս իրողութիւնը ճշմարիտ է, կը հետեւի որ կամ ազգի մը լեզուն անոր մտաւոր վիճակէն կախում ունի և կամ մտաւոր վիճակը լեզուէն։

Ըստ մեզ երկուքն ալ ճշմարիտ են, անդամմը լեզուն ազգային յառաջադիմութենէն ազդուելէ ետքը անհնար է որ ինքն ալ անոր վրայ ազդեցութիւն չընէ։

Հոս ահաւասիկ մեզի լուրջ դիտողութեան կէտ մը, եթէ մեր լեզուին այսօրուան վիճակը երեկուընէ աւելի յառաջացած կը տեսնենք, ուրախ ըլլալու ենք, քանզի ասիկա մեր յառաջադիմելուն յայտնի ապացոյց է. և. դարձեալ չանալու ենք որ մեր լեզուն օր քան զօր զարգանայ, գիտնալով, որ մեր մտաւոր զարգացումը մեր լեզուին յառաջադիմութենէն նոր զօրութիւն կամ մղում պիտի ընդունի։ Այս իրողութեան պատճառը մտքին հոդեբանական օրինակը մէկ արդիւնքն է. բայց հոս ասոր վրայ խօսիլ մեր նպատակէն դուրս է։

Կը մնայ քննել թէ մեր արդի լեզուին վրայ վերոյիշեալ դիտողութիւնը կը տեսնուի՞ արդեօք. և թէ մեր լեզուին զարգացմանը համար մեզի ի՞նչ ընել հարկ է։ Առաջնոյն համար յայտնի է թէ մեր արդի լեզուն արդէն չափով մը յառաջադիմութեան երես բռնած է և ասոր պատճառը Եւրոպական լեզուաց հմտութեանը մէկ հետեւանքը կրնայ ըսուիլ. և աս կէտն ալ երկայն դիտողութեան արժանի է, մեր դիտաւորութիւնն ալ այս անդամ ասիկայ դիտողութեան առնուլ չէ։ Մեր դիտողութեանն ուղղակի առարկայ եղող կէտը՝ երկրորդ խնդիրն է, այսինքն թէ մեր լեզուին զարգացմանը համար մեզի ի՞նչ ընել հարկ է։ Այս մասին ալ դիտողութեան առնելու շատ մը կէտերէն մէկը միայն կուզէինք յիշել որ մեր յառաջիկայ գործին հետ ի մտոյ յարաբերութիւն ունի։ Ամեն գրագէտ կրնայ զգալ որ մեր լեզուին զարգացմանը նպաստ եղող շատ պատճառներէն մէկն ալ մեր հին լեզուին հմտութիւնն է։ Եթէ Եւրոպական լեզուաց հմտութիւնը մեր գաղափարներուն և մտածութիւններուն ճշդուելուն և մաքրուելուն միջնորդաբար կազդէ, քանզի այս մասին անմիջական ազդեցութիւն ընող տարրը, որ համօրէն դիտութեանց ուսումն է, ընդհանրապէս մեր դաստիարակութեանը մէջ

շատ անկատար է, գրաբառ լեզուն այն դաղափարներուն և մտածութիւններուն բացատրութեանը բաւական հարուստ նիւթ մը մատակարարելու միակ աղբիւրն է։ Եթէ մեր հին լեզուէն մեր ձեռքը դանուածին չափ ալ գրաւոր մնացորդ մը ժառանգած չըլլայինք, կարող պիտի ըլլայինք արդեօք թէ հին և թէ նոր լեզուով մեզի նոր դրագիտութեան այնպիսի ընդարձակ ասպարէզ մը բանալ, ինչպէս որ հիմա բացած ենք։ Բայց և այնպէս յայտնի է թէ մեր նախնի լեզուին բոլոր աղբիւրները շատ քիչերուն կատարելապէս ծանօթ և ընտանի են։ Նախնեաց ամենէն ընտիր մատենագրութեան հաղիւ քսաներորդ մասը գրագիտական նպատակաւ կը գործածուի։

Մեր նախնի լեզուին ուսմանը նկատմամբ եղած այս զանցառութիւնը մեր լեզուին ծանր յառաջ երթալուն խոչ եղող արգելքներէն մէկն է։

Արդարեւ լեզուին խնդիրը ճեմարանի մը դիտողութեանը յանձնուելու չափ կարեւորութիւն ունի, բայց քանի որ այսպիսի հեղինակութիւն ունեցող մարմնոյ մը գլխաւոր գործը՝ հայկական լեզուն երեւան հանելով ներքուստ կենդանացնել պիտի ըլլայ, չենք կարծեր թէ մասնաւորաց ասնպատակով ըրած ջանքերը գործնական արդիւնք մը չունենան։ Այսպիսի ջանքերով հասարակաց ուշադրութեան ասնիւթիս դառնալուն տարակոյս չունինք, և այս ճամբով մեր կարօտութիւնն ասմասին թերեւս աւելի աղէկ ճանչցուի, ու վերջապէս վերը յիշուած միջոցին ձեռնարկելու դանք։

Այս և ասոնց նման խորհրդածութիւններէ յորդորուելով մեր նախնեաց մատենագրութենէն այս քաղուածն ըրինք։ Մեր քաղուածն Աւետարաններուն, Գործոց, Յուդթայ, Եսթերայ, Տովբիթայ և երեք Մակաբայեցւոց պատմութիւններէն առնուած է, և, ինչպէս կը տեսնուի ամենէն պարզէն սկսելով, ամենէն ճոխ և զարդարուն համասեռ, այսինքն մի և նոյն քերականական կարգն ունեցող շարադրութեան օրինակները կընծայեցնէ։ Հայերէնին ուսման նորընտել պատանիներու պիտոյիցը ծառայեցնելու նպատակաւ եղած դասական դործի մը մէջ, պարզ ծանօթութիւններ աւելացնել հարկ էր։ Մենք այս հարկը չափով մը հաճեցնելու

համար բնագրին մէջ համառօտ բաւական մեկնութիւններ աւելցուցինք։ Եթէ լեզուին վերաբերեալ ամեն պիտանի դիտողութիւն ըրած ըլլայինք, էջերուն գոնէ կէսը ծանօթութեամբ լեցնել հարկ պիտի ըլլար, և այն ատեն գրքին ծաւալն ու գինն այժմուն կրկինը կըլլար, պարագայ մը որմէ, գործը թէ տարածութեան և թէ գնոյն կողմանէ չծանրացընելու համար, զգուշացանք, խորհելով թէ մեր ըրած ակնարկութիւններն՝ ուշադիր ընթերցողաց, իրենց դիտողութիւնն աւելի ընդարձակելու առիթ կրնան ըլլալ։

Այս առաջին հատորին ընդունելութեամբը եթէ քաջալերուինք, նիւթերու աւելի զանազանութիւն պարունակող ուրիշ մէկ կամ աւելի հատոր ալ հրատարակելու պատրաստ ենք»։

Արդ՝ հնարհակալ լինելով ՀԱՏԸՆՏԻՐ ԳԱՂՈՒԱԾՔԻ աշխատասիրողէն, որ մեզ առիթ տուաւ այս՝ մեզ համար ամենէն կարեւոր խնդրի մասին մի ուշադիր հայեցուածք դարձուցանել, կը հրաւիրենք և մենք մեր կողմէն յարգոյ հայկաբան կոչուած, մեր նախնեաց ոստանիկ լեզուի ուսուցանողներին, և այս առարկայն հասկացող յարգոյ խմբագրերին և բանասէրներին, որ իրանք էլ հանդէս դուրս գան և մեզ իրանց հայեցուածքը ցոյց տան, մեր՝ վերեւն յառաջ բերած և մեր նախնեացմէ եղեբական, ծիլբիրեայ, ոսպանէկ կոչուած բարբառների և այսօրուայ էլ մեր՝ գրաբար և աշխարհաբար ասած լեզուների մասին։ Մենք էլ, այն ժամանակ մինչեւ հիմա ինչ որ ասուել է այս առարկայի մասին մեր դիտնական բանասէրների և մեր կողմէ, երկար բարակ մեր ընթերցողների առաջը կը հանենք։

ՇԱՀՐԻԱՐՅԻՈՑ[1] ՄԻ ԵՐԳԸ

Ա՛ղայ, դու հե՞ր իս, մե՞ր իս[2],
Ո՞ւր եկար կէս դիշերիս.
Ա՛յ նանի ջան, այ լուլուլու[3],
Ծոցումս քեզ տեղ չըկայ
Գլուխդ դէ՛ր կռներիս[4]։

Ա՛ղայ, դու բաղոքն[5] արի՛,
Ոտներովդ ջաղոքն[6] արի՛,
Էս թաղը ղալմաղալ ա[7],
Ման տո՛ւր էն թաղոքն արի՛։

Գեղից դաս դեղը մոնեմ,
Իմ քցած տեղը մոնեմ,
Ինձանից ջոկ եար բռնեմ,
Բէմուրաս հողը մոնեմ։

Վարդ եմ քաղել մաղերով
Վեր եմ դրել շաղերով[8],
Հրէս[9], եկաւ իմ եարն
Ալ ձին տակին խաղալով։

Գնացի ջուրը տեսայ,
Շուշապանդ[10] դուռը տեսայ,
Իմ հանի աղիզ փեսայ,
Գուլդաղ[11] երեսդ տեսայ։

Ալ ձին նալը ի՞նչ անի,
Սիրունը խալը[12] ի՞նչ անի,
Սիրածը սրտով ընի,
Աշխարհի մալն ի՞նչ անի։

Ա՛ղայ դու հատիկ մատիկ[13],
Երեսդ նռան հատիկ,
Ի՞նչ վախտ ես քեզ կու տեսնեմ
Համ Համբարձումն է, համ Զատիկ։

1 Շահրիար, Էջմիածնի մոտ մի գիւղ է։ 2 Ա՛յս ո՞ւր ես։ 3 Ամեն երկուսողն կրկնելու է։ 4 Բազուկներիս վրայ։ 5 Ա՛յդու կողմէն։ 6 Փայտով շինուած պատնէշէն անցիր։ 7 Բաղմութիւն է։ 8 Ցողերով։ 9 Ա՛հա։ 10 Ապակէ։ 11 Վարդեղոյն։ 12 Երեսին սեւ բիծ։ 13 Կարիճ պատանի։

Մեծ արտումն փուշ կըլի ,
Սառն աղբիւրին թուշ[1] կըլի ,
Ուր դնում ես թէղ արի՛
Եարդ քեղ կարօտ կըլի ։

Ջաղայքի դուռը տաշած
Եաղլուխիս կիւլը քաշած ,
Մեռնիմ կէս կեռ[2] ունքերիդ ,
Հէնց ա (է) ղալամով քաշած ։

Գնացի դեռը լուած.ք ,
Սապոնս ոսկեջրած ,
Հերս ու մերս ի՞նչ անեն ,
Ճակատիս էս է դրած ։

Աղջիկ , աղջիկ , ալ աղջիկ ,
Երեսդ կայ խալ՝ աղջիկ ,
Էրնէ՛կ էն օրին կըլնի ,
Իմ քեռը քեղ տալ՝ աղջիկ ։

Ծառիս տակը մանիշակ ,
Իմ եարը քանց քեղ չիշակ[3] ,
Օխթը թումնից[4] անց կենամ
Քեղ բռնիմ եարիս մշակ ։

Մի ջաղայք երկու դռնի ,
Բարձ բերէ՛ք եարս կռնի[5] ,
Ես , դու , մի պաղում պտ'ենք[6] ,
Ես չնառի դու նռնի ։

Ա՛ տղայ , դու պող ձիաւոր ,
Սաղմոսը ծոցիդ սուլոր ,
Էրնէկ կու տամ էն օրը
Գաս մեր տունը թագաւոր ։

1 Մօտ։ 2 կամար։ 3 Գեր ու բարակ։ 4 Թումանը տասը բաւպլի է։ 5 կուռն, ռէ–, կռնի, ռէ–ռ։ 6 Պիտի լինինք։

ԽՄԲԱԳԻՐ–ՏՆՕՐԷՆ
ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ